

ԱՄԵՐԻԿԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

Պաշտոնաթերթ ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԻՍ 30, 2024

Ը. Տարի, թիւ 26 (381) (Նոր Շրջան), Հիմնում 1899-ին, իբրեւ «Զայն Հայրենեաց»

ՊԲԵՐՔԵԻ ՄԵՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՅՈԳԵԴՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՅԱՆԴԻՊՈՒՄ

«ՓՈԹՈՐԻԿԻ ՄԵՋ ՄԱՅԱՏ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՆԱԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ՆԱԽՊԵՏԻ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այսպէս արտայայտուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Երեքշաբթի, 25 Յունիս 2024-ին, մարտնիթ եկեղեցւոյ կեդրոնատեղի Պքերքէի մէջ կայացած Լիբանանի քրիստոնէայ ու իսլամ հոգեւոր պետերու հաւաքին:



Մարտնիթ եկեղեցւոյ պէտ Ռայի պատրիարքին հրաւերով տեղի ունեցած յիշեալ հաւաքի ընթացքին յաջորդաբար խօսք առին Ռայի պատրիարք, կարտիմալ Փարոյին, Արամ Ա. Կաթողիկոս եւ Աւուտ արքեպիսկոպոս. իսկ իսլամներուն կողմէ՝ հանրապետութեան միւֆթի շէյխ Տրքիան, շէյխ Ապի Մունա եւ շէյխ Ալի Քատուր: Բոլորը շեշտեցին նախագահական շուտափոյոք ընտրութեան կարեւորութիւնը:

Վեհափառ Հայրապետը առիթը ունեցաւ քարտիմալ Փարոյինի հետ երկար զրոյց ունենալու եւ Լիբանանի նախագահական ընտրութեան գծով իր տեսակետը պարզելու. Հայրապետը նաեւ անդրադարձաւ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութեան եւ Արցախի ժողովուրդին միջազգային երաշխաւորութեամբ վերադարձի ու հայ ռազմագերիներու հարցին:

Յայտնենք, որ այս հարցերուն շուրջ Նորին Ս. Օծուքիւնը անդրադարձած էր Վատիկանի մէջ եւս իր ունեցած հանդիպումներու ընթացքին:

Նոր Շրջան

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՀԱՄԵՐԸ ԽԼԵՅՑ ԵՐԱԺՇՏԱՍԵՐՆԵՐՈՒ ԱՆՀՈՒՆ ՄԵՐԸ ՀԱՆԴԵՊ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ



Յունիս 27-ը անկասկած արձանագրուած պիտի մնայ մեր տարեգրութեան էջերուն մէջ որպէս յաղթանակի օր: Այս մեծ ուստանին խստապահանջ հայութեան յաղթանակի օրն էր երբ Գարնդիկի համերգասրահի մէջ ելոյթ ունեցաւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբը իր 100-է աւելի իր տաղանդաւոր երաժիշտներով, ղեկավարութեամբ խմբավար Մերկէյ Սմբատեանի եւ ջութակի ընկերակցութեամբ Մերկէյ Խաչատրեանի:

Մրահը ամբողջութեամբ լեցուն հայ եւ օտար երաժշտասերներով եղաւ հպարտութեան օր մը, մանաւանդ այս օրերուն երբ դժբախտաբար Հայաստան կը բոլորէ տագնապալի քաղաքական շրջան մը:

Արտերկրի հայութիւնը պէտք ունէր այս համերգին, ցոյց տալու մեր մշակութային արժէքները մանաւանդ նոր սերունդին համար, որոնց ներկայութիւնը մեծապէս գնահատելի էր այդ երեկոյ: ՀԲԸՄ-ը իր կարգին բերաւ իր լայն աջակցութիւնը այս համերգին նախաձեռնութեան մէջ:

«Պայքար» լայնօրէն պիտի անդրադառնայ:

Յ.Վ.

ՅԱՊԹԱՆԱԿԸ ԵՐԲԵՐ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՁԷ,
ԻՍԿ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԲԵՐ ՎԱՆՃԱՆ ՁԷ:

ԿԱՐԵՒՈՐԸ

ՁՅԱՆՁՆՈՒԻԼՆ Է:

ՈՒՆԱԹՈՆ ՁԵՐՁԻԼ



ԱՆԿԻՆԱԴԱՐՁ՝ ԵՒ ԱՅԼԵՒ ՊԵՐԻ ԱՌԱՋ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԸ ԱՆՅԱԾԻՆ՝ ԵՒ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼԻՔԷՆ

ՊՈԿՏ. ԱՐԵՍԻՐ ԿԵՐԵՆԵԱՆ

Հայաստանի վերանկախացման երեսները տարիներու պատմութեան մէջ, ընթացիկ 2024 տարուան Յունիս ամսուան վերջին օրերը կարելի է նկատել վերջաւորութիւնը, ծանր զարգացումներով յատկանշուած մօտ երեք տարիներու ժամանակահատուածի մը, որուն սկիզբը կը նկատենք 2020 տարուան 44-օրեայ Արցախի երկրորդ եւ խորաւնշակ պատերազմի օրերը:



Այս յօդուածին առաջադրութիւնն է, մեր մամուլին տրամադրելի սահմանափակ տարածքին մէջ, կատարել վերոյիշեալ ժամանակահատուածին հակիրճ եւ առարկայական վերլուծական գնահատականը, եւ թուարկել, անկէ բխած՝ պատճառաբանուած ակնկալիքները, անմիջական գալիք երկու տարիներու շրջանին՝ մինչեւ յառաջիկայ 2026-ին նախատեսուած ընդհանուր ընտրութիւնները:

2020 տարուան արցախեան 44-օրեայ պատերազմը իր աղէտալի արդիւնքով բացայայտեց, թէ Հայաստանի վերանկախացման յաջորդող բոլոր իշխանութիւնները, բացառելով որոշ չափով Առաջին Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի շրջանը, ծանրօրէն պատասխանատու են այդ ցաւալի արդիւնքին: Առաջին հերթին, անոնք անհոգ եւ զանցառու եղած են հայրենիքը ամէն օր պաշտպանական բարձրագոյն մակարդակի սեփական ռազմական եւ բանակային միջոցներով օժտելու իրենց պատասխանատուութեան նկատմամբ: Անոնք նաեւ պատասխանատու են դիւնապետական դաշտին մէջ անկարող եղած ըլլալով իրատես կերպով գնահատելու հաւատարմութիւնը եւ վստահութիւնը այն այսպէս կոչուած դաշնակից երկիրներուն, որոնց բերելիք օգնութեան վստահած էին, սպառնալովու համար սեփական հայրենիքին պաշտպանութիւնը:

Այժմ կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը 2020-էն մինչեւ այս վերջին օրերը երկարող երեք կամ չորս տարիներու շրջանին:

Այս շրջանին սկիզբը, 2021 տարուան ընթացքին է որ տեղի ունեցան ընդհանուր ընտրութիւններ, բոլորին կողմէ ընդունուած ազատ եւ օրինաւոր պայմաններու մէջ: Իբրեւ արդիւնք ընտրուեցան մինչեւ այսօր գործող Ազգային Ժողովի պատգամաւորները: ԲՊ-ական լայն մեծամասնութեամբ կազմուեցաւ այսօրուան իշխանութիւնը գլխաւորութեամբ Վարչապետ Նիկոլ Փաշինեանին: Իսկ ընդդիմադիրները ամբողջութեամբ կազմուեցան նախորդ տարիներու իշխանութեանց պատկանող անդամներէն: Այս կազմին տկարութիւնը մինչեւ այսօր կը կայանայ, մեծ թիւով բոլոր միւս քաղաքական կուսակցութիւններուն բացակայութեան մէջ:

Բնական է որ այս պայմաններուն մէջ, վերջին երեք տարիներու ընթացքին, գնահատման բայց մանաւանդ քննադատման կիզակետը եղաւ Փաշինեանի գլխաւորութեամբ գործող իշխանութեան գործունէութիւնը:

Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը արդարօրէն գնահատելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ անոր աշխարհաքաղաքական իմաստով արտակարգօրէն դժուար եւ հակասութիւններով բեռնաւորուած դիրքը, եւ հետեւաբար նաեւ այս վերջոյն համաշխարհային նուրբ եւ դժուար քաղաքականութիւն մը վարելու անհրաժեշտութիւնը:

Պարզ է թէ Վարչապետ Փաշինեանը եւ իր վարչակազմը փորձառութեան ակընյայտ պակաս ունէին, այս բնագաւառին մէջ: Բնական պէտք էր ըլլար որ իրենք ջանային օգտուիլ իրենցմէ դուրս այն ոյժերէն որոնք անցած էին այդ դժուար փորձառութիւններէն: Սակայն չուզեցին օգտուիլ այդ պատեհութենէն եւ այդ պատճառաւ իսկ, սկիզբը դրսեւորեցին յաճախ հակասական գործառնութիւններ:

Ողջունելի է արձանագրել թէ տարբեր դժուար ելեւէջներէ անցնելէ ետք, այսօր կը ջանան Արեւմուտքի հետ բաւական խոստմնակից յարաբերութիւններ հաստատել, պահելով հանդերձ ձեւական կապերը, գլխաւորաբար «աւանդական դաշնակից» Ռուսիոյ հետ: Տակաւին շատ լուրջ պատմելներով լեցուն է այս ճամբան: Սակայն պէտք է անցնիլ անկէ ապահովելու համար երկրին պաշտպանութեան եւ տնտեսութեան իսկական հզօրացումը:

Ինչ կը վերաբերի երկրին ներքին՝ քաղաքական, տնտեսական, իրաւական եւ այլ բնագաւառներուն, եթէ այսօրուան իշխանութիւնները ակնյայտօրէն իրագործած են ժողովրդավարական իմաստով զգալի փոփոխութիւններ եւ յաջողութիւններ, միւս կողմէ սակայն անոնք պատասխանատու են կարելոր բացթողումներու համար:

Երկրին ուղղութիւն տալու դժուարին աշխատանքին մէջ բացթողումներու առաջինը բացակայութիւնն է, ընտրութեանց արդիւնքով դուրս մնացած, արժէքաւոր՝ սակայն փոքր խումբերու վերածուած, հաւասարակշռուած եւ ժողովրդավարական սկզբունքներու խորապէս հաւատացող շրջանակներու կարող

(Շար.ը տեսնել էջ 2)

ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁ՝ ԵՒ ԱՅԼԵՒՍ ԴԷՊԻ ԱՌԱՋ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԸ ԱՆՅԱԾԻՆ՝ ԵՒ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼԻՔԷՆ

(Ծարունակում Ա. Էջեն)

ներկայացուցիչներուն: Իշխանութիւնները իրենց իսկ նախաձեռնութեամբ պէտք է տեղ տան այս վերջիններուն եւ օգտուին անոնց բերելիք նպաստէն:

Իշխանութեանց երկրորդ մեծ բացթողումն է լայնատարած հայ Սփիւռքին նկատմամբ իրենց որդեգրած անփառունակ կեցումաժրք: Ի գին կրկնութեան պէտք է վերյիշեցնել թէ լայնատարած Սփիւռքը ունի բարեկամեցողութիւն եւ լայն միջոցներ, սակայն ան հաւաքականօրէն անկազմակերպ է: Մեծագոյն սխալն էր ցրուել Սփիւռքի Նախարարութիւնը եւ զայն փոխարինելը այսպէս կոչուած բոլորովին անարդիւնաւէտ եւ յաւակնոտ Սփիւռքի յանձնակատարով մը:

Հիմա շարունակենք այս վերլուծողական հակիրճ ակնարկը, գնահատականը տալով Ազգային Ժողովի ընդդիմադիր երկու խմբաւորումներու գործունէութեան, եւ անոնց քաջալերանքով ժամանակ առ ժամանակ փողոցը եւ հրապարակները լեցնող շարժումներու կատարած դերին:

Ազգային Ժողովի ընդդիմադիրները իրենց ընտրուելուն առաջին իսկ օրէն եւ մինչեւ այսօր, ամէն օր կը փաստեն թէ իրենք, քաղաքակիրթ աշխարհի ընդունուած չափանիշներով, պարզապէս արժանի չեն կրելու «ընդդիմադիր» անունը: Իրենց գործածած հայեցողիկ լեզուն, եւ շիշեր արձակելով կռիւներու ձեռնարկելու գործելակերպը խորապէս ամօթալի եւ ապակառուցողական ըլլալով, իրենց վարկը իջեցուցած է ոչինչի:

Ինչ կը վերաբերի փողոցի շարժումներուն, 44-օրեայ պատերազմէն ետք մինչեւ այսօր, մօտ երեք տարիներու ընթացքին, ժամանակ առ ժամանակ փողոցը եւ հրապարակները լեցնող, բաւականին մեծ թիւով մասնակիցներով բնորոշուող, ամբոխավարական շարժումներուն վերջինն էր, այսպէս կոչուած «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումը:

Ժողովրդական կարեւոր մասնակցութեամբ այս բողոքի «շարժումներուն» կապակցութեամբ, պարզ եւ հասկնալի պէտք է ըլլայ բոլորիս համար թէ բնական եւ ակնկալելի է որ Հայաստանի մէջ, ինչպէս երկրագունդին երեսին գտնուող որեւէ քաղաքակիրթ եւ մանաւանդ ժողովրդավար երկրի մէջ, անխուսափելի է որ ժողովուրդին մէկ մասը դժգոհ ըլլայ օրուան իշխանութեանց աշխատանքէն: Անբնական պիտի ըլլար հակառակը: Այդպէս է պարզապէս, Գանատայի, Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Սպանիոյ եւայլն, եւայլն, երկար շարք մը այլ յառաջադէմ երկիրներու մէջ: Հասկնալի եւ ակնկալելի է նաեւ որ յատուկ եւ յատկօրէն բնորոշուած հարցերու պարագային դժգոհութիւնը ըլլայ բաւականին համատարած եւ ուժեղ, որպէսզի մեծ թիւով քաղաքացիներ փողոց իջնեն եւ ցոյցեր կատարեն, օրէնքով նախատեսուած՝ ռաիփակներու հսկողութեան տակ: Սակայն ոչ մէկ ժամանակ կ'ակնկալուի թէ այդ ցոյցերուն իբրեւ արդիւնք իշխանութիւնը հրաժարի եւ պարզապէս իր տեղը հրամցնէ այդ ցոյցերը կազմակերպող խմբակին... իշխանափոխութեան մէկ եւ միակ միջոցը ընտրութիւններն են: Խստագոյն տագնապներու ժամանակ կը կատարուին արտահերթ ընդհանուր ընտրութիւններ: Այլապէս կը սպասուի մինչեւ յաջորդ նախատեսուած հերթական ընտրութիւնները որպէսզի ժողովուրդի մեծամասնութեան ձայնով կատարուի իշխանափոխութիւն, եւ վերջ:

Այլապէս, երբ պատահի թէ փողոցի շարժումները դառնան անզուգելի եւ տեղի տան ֆիզիքական վնասներու կամ վայրագութիւններու, այն ժամանակ առաջին հերթին ռաիփակները, եւ երբ անհրաժեշտ է, նոյնիսկ երկրին զինեալ ուժերը կը միջամտեն եւ յանցագործները կը ստանան համապատասխան պատիժներ:

Ահա երբ այս պարզ հասկացողութեամբ գնահատենք 2020-էն ի վեր Հայաստանի մէջ կատարուած, մեծ թիւերու մասնակցութեամբ տեղի ունեցած, փողոցի երեք շարժումները, պէտք է նշել թէ երեքն ալ ձախողեցան եւ մնացին ապարդիւն: Առաջինը եւ վերջինը նաեւ դուրս ելան օրինականօրէն ընդունուած սահմաններէն: Վերջինը՝ «Տաւուշի Ծարժումը», ծրագրուած թէ չծրագրուած պայմաններու մէջ, վերջաւորութեան, անցաւ կոպիտ ոյժի գործադրութեան կարմիր գիծը, երբ ան ձախողօրէն փորձեց խուժելով մուտք գործել Ազգային Ժողով:

Անհրաժեշտ է աւելի ծանրանալ «Տաւուշի Ծարժումին» վրայ, քանի որ ան տակաւին թարմ է բոլորին միաբերում մէջ:

«Տաւուշի Ծարժումը» սկիզբէն, Մայիսի 9-ի հրապարակի մեծ հանրահաւաքի օրէն սկսեալ ակնյայտօրէն ենթակայ էր վերջանալու ձախողութեամբ:

Արդարեւ, բոլորովին իրարմէ անջատ՝ տարբեր տարբեր խումբեր, Տաւուշ-Երեւան ճամբուն վրայ, սկիզբը խորհելով, թէ յանկարծ յայտնուած էր Հայաստանը փրկող Մեսիան, միացած էին շարժումին: Նոյնպէս ալ սակայն, անոնք աստիճանաբար հեռացան անկէ երբ յայտնի դարձաւ թէ ան չունէր նուազագոյն իսկ չափով մտածուած քաղաքական ծրագիր: Ան չունէր նաեւ քաղաքական նուազագոյն իսկ չափով պատրաստութիւն ունեցող, վստահութիւն ներշնչող, եւ քաջայայտ ու համարձակօրէն ներկայացող ղեկավարութիւն: Ընդհակառակը ղեկավարութեան միակ յաւակնութիւն ունեցողը, անսպասելիօրէն Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգեւորական մըն էր, որ նաեւ շուտով դարձաւ Ծարժման առաջարկած «Վարչապետի թեկնածուն»: Այս պայմաններուն տակ, տեսնելով «Ծարժումին» քաղաքական անլրջութիւնը ան կորսնցուց նախ առաջին օրերու իր կարեւորագոյն հետեւորդները, եւ ի վերջոյ մնացին միայն ուսանողներ, դպրոցականներ եւ քանի մը հանրաժանօր իշխանութեան երդուեալ հակառակորդներ: Կ'երեւի թէ այս օրերուն նոյնիսկ այս վերջինները ցրուած են եւ «թեկնածու վարչապետ»ը ինք եւս հեռացած է փողոցէն, ամառնային «արձակուրդ»էն ետք աշնան, փողոց վերադառնալու անհետք խոստումով:

Անշուշտ յուսախաբութիւնը մեծ պիտի ըլլայ բոլոր այն պարկեշտ քաղաքացիներուն եւ լրատուական խումբերուն մօտ որոնք կարճ տեւողութեան մը ընթացքին յուսացած էին յանկարծ գտած ըլլալ, մինչեւ այսօր անյայտ մնացած արտակարգ փրկիչ մը: Այսպէս ինչ եւս սակայն իրենք բոլորն ալ, իսկութեան մէջ իր գործունէութեամբ իրենց անձանօք այս «փրկիչ»ին հմայքէն այնքան դիւրաւ տարուած ըլլալով: Արդարեւ բոլորն ալ տեղեակ եղան թէ այս հոգեւորականը տասը երկար տարիներ պաշտօնավարած էր որպէս Գանատայի Թեմի Առաջնորդ: Իրենց պարտքն էր Գանատա ուղարկել փոքր սակայն լուրջ քննիչ պատուիրակութիւն մը այստեղ առարկայական տեղեկութիւններ քաղելու համար, այդքան կարեւոր դիրքի յաւակնութիւն ունեցող այդ անհատին մասին: Այդպիսի քննարկման մը արդիւնքը ցոյց պիտի տար թէ այդ տասը տարիներու վերջաւորութեան Գանատահայոց Թեմը հասած էր նիւթական եւ մարդկային յարաբերութիւններու տագնապներու առնուազն լրջագոյն վիճակի մը որմէ ետք հազիւ թէ այսօր ան վերա-

գտած է իր նախկին անդորրը:

Թէն «Տաւուշի Ծարժումը» այլեւս ոչ յոյս եւ ոչ ալ վտանգ կը ներկայացնէ հայրենիքի ապագային նկատմամբ, սակայն դժբախտաբար շատ աւելի մտահոգիչ է այն պարագան որ այս քանի մը ամիսներու այդ ձախող նախաձեռնութիւնը իր լուրջ բացասական անդրադարձը ունեցաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ամբողջ կառոյցին վրայ եւ յատկապէս Սրբոթիւն Սրբոց Մայր Աթոռին՝ եւ անոր համագգային բարոյական միասնականութեան նշանաբանը ըլլալու անփոխարինելի դերին վրայ:

Պատմութեան ընթացքը երկար է, եւ այս կարճ տեւողութեամբ միջադէպը վստահաբար պիտի շուտով մոռցուի եւ կորսուի ու անյայտանայ անցեալին մէջ:

Միւս կողմէ սակայն ամէն ջանք պէտք է ազգովին կատարենք, որպէսզի Մայր Աթոռը եւ անոր գահակալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայ ժողովուրդին թէ պետականութեան համայնապատկերին մէջ վերագտնեն բազմահազարամեայ մեր «Հայոց Պատմութեամբ» (եւ ոչ «Հայաստանի Պատմութեամբ»...) թրծուած եւ իրենց յատկացուած բարոյական բարձրագոյն դիրքերը: Ի դէպ, այս նաեւ պատեհ հանգրուանն է ուր Անթիլիասի Աթոռը որ այս անգամ, հագուազիւտ եւ ողջունելի փութկոտութեամբ տագնապալից այս շրջանին, այնքան մտահոգ գտնուեցաւ պաշտպան հանդիսանալու Մայր Աթոռին եւ անոր Գահակալին, նաեւ ան անյապաղ սրբագրէ արդէն շատ յապաղած Հայաստանեայց Եկեղեցւոյ կառոյցին մէջ իր իսկ կողմէ, եօթանասուն տարիներէ ի վեր ստեղծուած՝ Պարսկաստանէն մինչեւ Յունաստան, Միացեալ Նահանգներ եւ Գանատա, հերձուածային բաժանումներու վիճակը:

Անցնող շրջանին մասին այս հպանցիկ վերլուծական ակնարկը, որոշ կերպով կը մատնանշէ, թէ այսօր՝ 2024 Յունիս ամսուան վերջաւորութեան, մենք ազգովին կը գտնուինք իսկական կարեւոր անկիւնադարձի մը սեմին:

Յաջորդական ամիսներուն՝ եւ յատկապէս մինչեւ 2026 թուի յաջորդ հերթական ընդհանուր ընտրութիւնները, մնացած երկու տարիներու ընթացքին, Հայաստանի իշխանութիւնները պէտք է գլուխ հանեն, քաղաքական շատ նուրբ եւ խրթին գործառնութիւններ եւ նախաձեռնութիւններ: Աշխարհաքաղաքական ներկայ անկայուն եւ փոթորկոտ պայմաններուն մէջ, բոլորովին աննախանձելի է իրենց վիճակուած այս պարտականութիւնը:

Այս կապակցութեամբ կը կրկնենք եւ կը վերահաստատենք մեր բազմիցս արտայայտած ակնկալութիւնը եւ մաղթանքը, թէ վարչապետ Փաշինեան եւ իր վարչակարգը այս դժուար աշխատանքը կատարելու ժամանակ օգտուին իրենցմէ դուրս գտնուող այն բոլոր քաղաքական ոյժերէն որոնք ակնյայտօրէն պատրաստ են դրական օժանդակութիւն բերելու իրենց:

Անվիճելի է սակայն, թէ այս մեծ եւ դժուար ճանապարհին վրայ ընթացող մարդ որեւէ ժամանակահատուածի մէջ կրնայ ունենալ միայն մէկ նաւապետ:

Ներկայ իշխանութիւնները, պարտին առանց ձգձգումի նաեւ վերահաստատել օրկանական կազմակերպուած լուրջ կապեր աշխարհատարած Սփիւռքին հետ: Պէտք է վերահաստատել փորձառու նախարարի հսկողութեան տակ Սփիւռքի նախարարութիւնը: Հայրենիքին մեծագոյն հարստութիւնն է Սփիւռքը, պայմանաւ որ զայն գործի լծելու նրբութեանց կարող ըլլան մեր իշխանութիւնները:

Հայաստանի իշխանութիւնները կարեւոր աշխատանք ունին կատարելիք մանաւանդ երկրին, ժողովուրդին մօտ առաւել վստահութիւն ներշնչելու համար: Որքան որ կ'այսպէս կոչուած «Բողոքի շարժումներու» ոճը, եւ գործելակերպը, ակնյայտ է սակայն թէ ժողովուրդին մէջ առկայ են դժգոհութեան լուրջ պատճառներ: Իշխանութիւնը չի կրնար արհամարհել այդ իրականութիւնը: Իր պատասխանատւութիւնն է կատարել այն ինչ որ հարկաւոր է մեղմացնելու համար այդ դժգոհութեանց պատճառները: Միջոցներէն մէկն է կարելի չափով, մանաւանդ ժողովուրդին բացատրել իրենց որդեգրած կարգ մը անժողովրդական դիրքորոշումներուն տուն տուող խոր պատճառները: Իշխանութիւնները պէտք է նաեւ գիտակցին թէ կան կարմիր գիծեր, որ որեւէ իշխանութիւն արտօնուած չէ անցնիլ: Որպէս անվիճելի օրինակներ, Արարատը հայկական է եւ վերջ: Արցախը հայկական է եւ վերջ, սակայն նաեւ այս վերջնոյն մասին, հասկնալիօրէն դժուար գործ է ապահովել դիւանագիտական, օրինական, ռազմական եւ այլ բոլոր տուեալները որոնց միջոցաւ ուշ կամ կանուխ, գուցէ այլեւս աւելի ուշ քան կանուխ, կարելի ըլլայ յաջողութեամբ իրականացնել այդ երազը: Աւելորդ է երկարել այս ցանկը բոլորս տեղեակ ենք անոր պարունակութեան:

Ինչպէս յիշեցինք, այսօրուան իշխանութիւնները, թէն իրենց առաջին օրերուն, փորձառութեան մեծ պակասը ունէին, այսօր սակայն ակնյայտ է թէ արդէն իսկ բաւական լաւ կը դիմագրաւեն, մանաւանդ միջազգային քաղաքական կրկեսին վտանգաւոր եւ թակարդուած խաղերը:

Հայ ժողովուրդը անկասկածօրէն, իր խոշոր մեծամասնութեամբ պատրաստ է զօրավիզ կանգնելու, օրինաւոր ընտրութիւններով երկրին գլուխը կանգնած իշխանութեանց, ակնկալելով նաեւ որ անոնք իրենց կարգին մշտապէս յարգանք ցուցաբերեն ժողովուրդին տրամաբանական ակնկալութեանց նկատմամբ:

Յաջողութիւն հայրենիքին՝ եւ հայ ժողովուրդին:

Խմբագրութեան համակարգող՝	Պոկտ. Արշալիր Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Աւետիքեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Սթեմք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՌԵՃԵՊ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱԿԱՏԵԱՆ

Ենթադրաբար նախագահի, վարչապետի և նախարարի պաշտոններու վրայ, ինչպես նաև այլ պետական ենթապաշտոններու վրայ կը գետեղուին այնպիսի մարդիկ, որոնք ժողովրդային ընտրություններով եւ ոչ թէ քաղաքական կամ վարչական որոշումով կ'ընտրուին այդ պաշտոններուն, անոնց մէջ ատակ ու նուիրում համարուելով: Մեր օրերուն սակայն, եւ երկար ժամանակէ ի վեր պաշտոններու վրայ այլ ճամբաներով կը տեղադրուին մարդիկ: Շահագրգռուող միջազգային ուժերը ամէն բանէ առաջ իրենց ընտրած թեկնածուին շուրջ հանրային դրական կարծիք կազմաւորելու աշխատանք կը տանին, իրենց լծակ ծառայող միութիւններու եւ կազմակերպութիւններու օժանդակութեամբ: Այս ձեւով հակառակ այն իրողութեան թէ սկիզբէն ղեկավար պաշտօնեան որոշումը ըլլայ արդէն, սակայն ձեւակերպական ժողովրդային ընտրութիւններ կատարելէ ետք, ամբողջ ընթացքը այն տպաւորութիւնը կը թողու, թէ ղեկավարը որոշումով մը չ'է տեղադրուած իր պաշտօնին, այլ ազատ ընտրութեամբ եւ ժողովուրդին կամքով՝ ազատութեամբ եւ ժողովրդավարութեամբ (freedom and democracy):



ԷՐՏՈՂԱՆԻ ԱՍԿԱՐԱՅԻ ՊԱԼԱՏԸ

Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան անոնցմէ է, որ Արեւմուտքին կողմէ տեղադրուած է իր պաշտօնին վրայ, սակայն ձեւականօրէն «ժողովրդավարօրէն ընտրուած»: Վերոյիշեալ պաշտօնեաներու պաշտօնակութեան պարագան շատ աւելի արագ եւ հեշտ կը կատարուի, երբ արդէն անոնք իրենց վստահուած գործը աւարտած կամ անընդունակ ըլլալին փաստած են անոր մէջ: Շահագրգռուող ուժին համար քանի մը երկվայրկեան հեռաձայնային հրահանգ կ'արժէ միայն որեւէ պաշտօնեայ մը հեռացնելու արարքը: Իսկ այդ մէկը կը կատարուի նաեւ ֆիզիքական մաքրագործութեամբ՝ երբ պաշտօնեան կը հակառակի գործադրել իրեն հրահանգուած գործը կամ վտանգ կը սպառնայ զինք տեղադրողներու ծրագիրներուն:




ԵՆԼՏԸՉԻ ՊԱԼԱՏԸ

Ռեճեպ Թայիպ Էրտողան ծնած է 1954-ին, Սթանպուլի Պէյօղլու քաղաքում: Նախքան նախագահութեան պաշտօնը ստանձնելը ան վարչապետ ընտրուած էր 2003-ին ու պաշտօնավարած իբրեւ վարչապետ մինչեւ 2014: Էրտողան իշխող Արդարութիւն եւ Չարգացում կուսակցութեան (Adalet ve Kalkınma Partisi, The Justice and Development Party) հիմնադիրներէն եղած է 2001-ին: 2014-ին ան կ'ընտրուի Թուրքիոյ նախագահ եւ մինչեւ օրս կը գտնուի այդ պաշտօնին վրայ: Իսկապէս երկարատեւ իշխանութիւն մըն է այս, որովհետեւ զինք տեղադրողները գոհ մնացած են անոր վարմունքէն եւ գործելակերպէն: Արտաքին ուժերու համար ներքին հարցերը թէն կարեւոր կը թուին ըլլալ, սակայն ժողովուրդը գոհ պահելու կամ անոր լաւ կեանք մը շնորհելու հարցը անոնց վերջին մտահոգութիւնն իսկ չի կրնար դառնալ (Համացանցային Կայքէջ - https://en.wikipedia.org/wiki/Recep_Tayyip_Erdo%C4%9Fan):

Ըստ քաղաքական վերլուծաբան եւ թրքական հարցերու մասնագէտ Ռոպըրթ Էլիսի, թուրք հանրութիւնը այլեւս յագեցած է Էրտողանէն եւ նոյնիսկ զգուած: Ռոպըրթ Էլիս Աթէնքի մէջ Եւրոպական եւ Ամերիկեան Ռուսմասիրութիւններու Հետազոտական Հաստատութեան միջազգային խորհրդակցան է (Համացանցային Կայքէջ - <https://nationalinterest.org/feature/turning-point-turkey-211439>):

2024-ի Մարտին, Թուրքիոյ տեղական ընտրութիւններու արդիւնքները եկան փաստելու, որ թուրք հասարակութեան մեծամասնութիւնը այլեւս վստահութիւն ցոյց չ'էր տար Էրտողանի Արդարութիւն եւ Չարգացում կուսակցութեան, այլ Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի գաղափարաբանութեան հետեւող ընդլիմադիր

Ժողովրդային Հանրապետական կուսակցութիւնը աւելի ժողովրդականութիւն սկսած էր շահիլ: Վերջինիս առաջնորդը՝ Էօզլիլ Էօզլէ Թուրքիոյ ութսունմէկ նահանգներէն երեսունհինգի քուէները շահած էր, ընդհանուր 37 առ հարիւր յաղթանակ տանելով, մինչ Էրտողանի կուսակցութիւնը շահած էր քուէներու 35 առ հարիւրը: Աւելին՝ Ժողովրդային Հանրապետական կուսակցութիւնը երեսուն շրջաններու վստահութիւնն ալ շահած էր, ներառեալ Սթամպուլ, Անքարա, Իզմիր, Պուրսա, Անթալիա եւ Ատանա քաղաքները: Իբրեւ հետեւանք ընդլիմադիրներու այս յաղթանակին, միջազգային վերլուծաբաններ հարց կու տան թէ այս աթաթիւրքեան զօրաւոր ժողովրդականութիւն վայելող ալիքը՝ ի՞նչպէս պիտի համադրէ շրջանները իրարու հետ եթէ իշխանութեան գլուխ անցնի: Միւս կողմէ Էրտողան անդրադառնալով ընտրութիւններու արդիւնքին ըսած էր, թէ Մարտ ամսուան ընտրութիւններու արդիւնքը տակաւին վերջը չ'է, այլ անկիւնադարձային կէտ մըն է:



Էրտողանի իշխանութիւնը հաստատուելէ հինգ տարիներ ետք յստակ դարձաւ, թէ կառավարութեան նպատակը հանրային կեանքի մէջ կրօնքի (իսլամութեան) կշիռը վերահաստատել էր՝ հակակշռելու համար նախորդող համակարգի Աթաթիւրքի գաղափարաբանութեան հետեւող արեւմտամէտութեան: Էրտողանի հաստատման նոյն այդ ժամանակին է որ Մերձաւոր Արեւելքով խիստ շահագրգռուող Արեւմուտքը՝ սկսած էր իսլամ կրօնքը չարափոխելով տարածել արաբական եւ իսլամական երկիրներու մէջ, նպատակ ունենալով Մեծն Սիջին Արեւելքի ստեղծումը կործանարար միջոցներով: Էրտողան Թուրքիոյ Հանրապետութեան մէջ պարզապէս այս խիստ պարտադրանքն էր որ գործի կը լծէր: Իշխանութիւնը ձեռք առնելէ ետք անոր հետագայ քայլերը յստակ են այժմ, թէ ինչպիսի դեր վերցուցած էր ան Սուրիան եւ Լիպիան քանդելու գործին մէջ, արեւմտեան Արաբական Գարուն անուան տակ շինծու յեղափոխութիւններու թիկունք կանգնելով եւ թէ ինչպիսի յարաբերութիւններ ունէր Տաիլ եւ Նուսրա կեղծ իսլամական ահաբեկչական ուժային կազմակերպութիւններուն հետ, որոնք ուղղակի կ'ապուած են Իսրայէլի եւ Արեւմուտքի: Իսկ Էրտողանի դերը Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններու դէմ եւ Ատրպէյճանի նեցակցման ծիրին մէջ պարզ է արդէն:

Էրտողան Թուրքիոյ 2024-ի Մարտի ընտրութիւններու պարտութեան առիթով երբ անկիւնադարձային կը կոչէր եղածը, նկատի ունէր մօտալուտ մոր հանգրուանի մը սկիզբը անկախ այն հաւանականութենէն, թէ մոր հանգրուանին նոյնիման Էրտողան այլեւս որեւէ դեր չ'վերցնէ: Գալիք այս մոր հանգրուանը վերլուծաբան Ռոպըրթ Էլիս կ'որակէ իբրեւ Թուրքիոյ արեւմտականացման հանգրուանը:

Էրտողան իր ժողովրդականութիւնը տակաւ առ տակաւ կը կորսնցնէ ըստ վերլուծաբան Ռոպըրթ Էլիսի եւ հետեւեալ ձեւով կը թու պատճառները.-

Ա.- Մեծ քաղաքներու մէջ կառավարական թուրք պաշտօնեաներն ու գործաւորները Էրտողանի ի նպատակ ցոյցերու կը մասնակցին պարտադրաբար, վախճալով իրենց պաշտօններէն:

Բ.- Անքարայէն դուրս կը գտնուէր Աթաթիւրքի Անտառային Ազարակը, որ բնապահպանութեան շատ լաւ վայր մըն էր: Էրտողան զայն քանդել տալով անոր տեղը կառուցեց իրեն համար անձնական մեծածախս շքեղ պալատ մը:

Գ.- Էրտողան Պոլսոյ պատմական Երլուրգի Պալատը իրեն համար նախագահական պալատի վերածեց:

Դ.- Էրտողան Մարմարիսի մէջ մոր ամառանային պալատ մը կառուցեց:

Ե.- Յարատեւ բարձրացող սղաճը անօթութեան մատնեց միլիոնաւոր թուրքեր:

Զ.- Էրտողանի տիկինը ժողովուրդին խրատ կու տայ խնայել ճաշերը խուսափելու համար մսխումէ, իսկ ինք Հերմես (Hermes) վաճառանիշով շատ սուղ պայուսակ կը կրէ:

Է.- Երբ տարի մը առաջ Էրտողան Մալաթիա կ'այցելէր, բանուորները ցոյցերով դիմաւորեցին զինք, իրենց դժուար տնտեսական վիճակը յայտնելով, թէ իրենց տան մէջ հացը միշտ կը պակսի: Նախագահը ամենայն լկտիութեամբ անոնց քանի մը տոպրակ թէյ նետեց ըսելով. «Վայելեցէք զաւաթ մը համով թէյ»:

Ը.- Էրտողան քանի մը տարի առաջ ուրիշ պալատ մը կառուցեց Վանայ լիճի մօտերը:

Թ.- Անցեալ տարուան Թուրքիոյ զօրաւոր երկրաշարժէն վերապրողներ հանրութեան եւ լրատուական ընկերութիւններու առջեւ կը յայտարարեն, թէ իրենք լքուած կը զգան հակառակ Էրտողանի շուայլ խոստումներուն եւ չգոյ գործերուն:

Ժ.- Հիւանդանոցներու մէջ թուրքերուն համար տեղեր չեն յատկացուիր, փոխարէնը պաղեստինցի եւ Համասի վիրաւորներ եւ հիւանդներ կը գրաւեն անոնց տեղերը: Էրտողանի կառավարութիւնը անոնց կը հայթայթէ ամէն ինչ՝ նոյնիսկ ծխախոտ:

Վերջերս «Ահլալ Նիուզ» լրատուական գործակալութիւնը կը տեղեկացնէր. «Կաթիլ առ կաթիլ Էրտողանի իշխանութեան դէմ ցատումը կը մեծնայ»: Հանրային կարծիքի ուսումնասիրութիւն մը կը հաստատէ, թէ ժողովուրդին 70 առ հարիւրը դէմ է Էրտողանի իշխանութեան եւ զայն կը նկատէ հարուստի իշխանութիւն:

Հիմնուելով այս բոլոր փաստարկներուն վրայ, կը յանգնենք այն եզրակացութեան, թէ Էրտողան կ'իշխէ «հիմնէ ետք ջրհեղեղ» մտայնութեամբ, սակայն ինչպէս վերը մշուեցաւ, ան տակաւին կը գոյատեւէ՝ որովհետեւ իր տէրերուն ցուցմունքները լիովին կը շարունակէ կատարել:

Պէյրուս

ԱՐԵՎԵԼԻ-ԱՐԵՎՄՈՒՏԲ ՄԵԾ ԴԻՄԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՄԱԳՕ ԱՐԽԱՆ

Երկրին մեջ բաւական մեծ լարում ստեղծած եւ Բագրատ Սրբազանի առաջ-
նորոգումները վայելող «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումը կարծէք թէ կա-
մաց-կամաց կը մարի:

Ճիշդ է, որ իր վերջերս տուած մամոյն ասուլիսին ժամանակ Բագրատ Սրբ-
բազան կը հերքէր շարժումի մարտմին մասին եղած բոլոր մակարդակի են-
թադրութիւնները եւ լուրերը, սակայն գետնի վրայ առկայ իրավիճակը մեզի առ-
նուագն կը յուշէ, որ գալիք առնուագն երկու ամիսներուն նոյն շարժումը, կամ
որեւէ այլ շարժում պիտի չկարողանայ համաժողովրդային ցասումի նոր ալիք
մը ձեւաւորել:



Պատճառները շատ են ի հարկէ, սակայն այդ մասին կարելի է խօսիլ այլ
առիթով:

Միւս կողմէ եւ անդրադառնալով Հայաստանի իշխանութիւններու ընդհա-
նուր վարքին եւ ներկայացուցած ներուժին, ապա աւելի քան յստակ է արդէն,
որ իշխանութիւնները չունին առաջուան բարձր վարկանիշը, ու ատկէ գատ ալ
կ'ապրին մշտական մտավախութիւններու ուրականով:

Այս վիճակն է անշուշտ, որ կրնայ աւելիով բարդացնել անոնց գործը ու տեղ
մըն ալ մղելու զիրենք, որ աւելի մեծ ու աւելի անսրբագրելի սխալներու յորձա-
նուտին մէջ իյնան:

Այս բոլորին լոյսին ներքոյ հարկ է անշուշտ անգամ մը եւս դիտարկել, որ
Հայաստանի մէջ տեղի ունեցած կամ հետագային ալ տեղի ունենալիք դէպքերը
անմիջական կապով մը կապուած են արտաքին երեւելի կամ աներեւոյթ ազ-
դակներու հետ, որոնց ընդհանուր խորագիրը, ընդհանուր դիտակէտը կամ
դիտարարը իր նեղ պատուհանով կը նայի Արեւելք-արեւմուտք ընթացող մեծ
պայքարին, որ կարծէք այս ժամանակներու դադար մը ունենալու, կամ դադար
մը առնելու տրամադրութեան տակ չէ:

Ռուսեր, որոնք կը շարունակեն առ երեւոյթ վստահիլ Նիկոլ Փաշինեանին,
միւս կողմէ խորապէս դժգոհ են զինք «պաշարած» գործիչներու մեծամաս-
նութենէն, որոնք, դարձեալ ըստ ռուսական տրամաբանութեան ամէն ճիգ գործի
կը լծեն, որպէսզի Հայաստանը մտնէ արեւմտեան ճամբար:

Իր կարգին արեւմտեան պլոքը, որ բաւական համահունչ, տրամաբանուած
եւ մանաւանդ հետեւողական կերպով կը դիտարկէ Հայաստանի վերջին զար-
գացումները, կարծէք ունի այն ներքին համոզումը, որ գալիք փուլերուն Հայաս-
տան պիտի կարողանայ փոխարինել Վրաստանը եւ դառնայ իսկական եւ լիար-
ժէք գործընկեր: Հոս է նաեւ, որ կը ծագի մեծ հարցադրումը, որ արդէ՞օք Արեւ-
մուտքը եւ մանաւանդ Միացեալ Նահանգները, իրողապէս պիտի կարենան հո-
գալ Հայաստանի պէտքերը, կամ թէ ստեղծուած «բարեկամութիւն»ը պարզապէս
պիտի ծառայէ գործի դնելու Ռուսաստանը աւելիով «անկլինի բերել»ու իր ծրա-
գիրները: Այս պարագան է, որ առաւելաբար մեծ ռիսքերու նոր դուռ մը կը բա-
նայ հաշուի առնելով անշուշտ Հայաստանի տնտեսական կայնեալութիւնը
Ռուսաստանէն, կամ անոր տնտեսական արբանեակ համարուող՝ ԵԱՏՄ-էն:

Հետաքննական լրագրութեան մը փաստացի տուեալներու կարիք չզգացուի,
եթէ ճշգրիտ ձեւով դիտարկենք Հայաստանի այսօրուան տնտեսական համա-
պատկերը, ուր բոլորին համար ալ պարզէն աւելի պարզ է, որ մինչեւ այս պահը
Հայաստանի եկամուտներու մեծ տոկոսը կը հասնի Մոսկուայէն, կամ անոր
բարեկամ ու «արբանեակ» երկիրներէն:

Ու այս տուեալները ճիշդ վերլուծելէ ետք, դէպի Արեւմուտք եղող որեւէ փորձ
աւելի քան, որեւէ ժամանակ կրնայ համարուիլ իրական «անձնասպանութիւն»
մը:

Տակաւին չեն խօսիր Հայաստանի մեծագոյն խնդրին՝ անվտանգութեան
մասին, որուն դիմաց շատ-շատեր լիարժէքօրէն վստահ են, որ Արեւմտեան
պլոքը, բացի զսպումի մեքանիզմներ կ'իրառելէ պատրաստ չէ, ոչ մէկ քայլ
իրականութիւն դարձնելու:

Այս բոլորին անդին, աւելի քան յստակ է արդէն, որ Հայաստանի մէջ տեղի
ունենալիք զարգացումները կապուած պիտի ըլլան Ռուս-ուրբանական ճա-
կատին վրայ եղող զարգացումներով, որոնք ըստ երեւոյթին շատ ալ հեռու չեն
վերջնական հանգուցալուծման մը փուլէն:

Առաւելաբար տնտեսական հանրոյթ հանդիսացող Եւրոպական Միութեան
մաս կազմելը բնականաբար դրական կարելի է համարել, սակայն նոյն առու-
մով այդ մարմնին Հայաստանի անդամակցութիւնը ի գորտ չէ լուծելու մեր երկ-
րին առջեւ ծառացած անվտանգային խնդիրները:

Այս բոլորէն անդին, աւելի քան յստակ է արդէն, որ Հայաստանի մէջ տեղի
ունենալիք զարգացումները կապուած պիտի ըլլան Ռուս-ուրբանական ճա-
կատին վրայ եղող զարգացումներով, որոնք ըստ երեւոյթին շատ ալ հեռու չեն
վերջնական հանգուցալուծման մը փուլէն:

Վերջնական լուծումը անշուշտ պիտի ըլլայ մէկ կողմի մը յաղթանակով, իսկ
այդ յաղթանակի բացակայութեան պայմաններուն, եթէ կողմերը աւելի խե-
լամիտ ըլլան պիտի գտնուին «ոսկեայ միջին» եզր մը, որ վստահօրէն աւելիով
պիտի բորացնէ Ռուսաստանի ներկայ վիճակը:

Այս բոլորը անշուշտ կարճաժամկէտ լուծումներու մեծ պրիսմակին կը պատ-
կանին, իսկ Հայաստանի ապագան ապահովելու եւ անոր անվտանգութիւնը
հզօր սիւներով ամրացնելու միակ ճանապարհը ներքին կայունութիւնն է, որմէ
ալ պիտի բխին հզօր բանակ եւ հզօր երկիր մը կերտելու հիմնադրոյթները,

որոնք ներկայ փուլին համարեա թէ չկան, իսկ գալիք փուլը կրնայ ներքին
քիւրեղացման փուլ մը ըլլալ, եթէ ի հարկէ նոր եւ որակեալ ընդդիմութեան մը
առաջին ծիծեռնակները երեւելի դառնան:

Ամէն պարագայի օրերս Հայաստանի Եւրոպական Միութեան անդամակ-
ցութեան մասին ուշագրաւ յօդուած մը նկատեցի («Ռատար.ամ» կայքին մէջ),
որ կը կրէր հայրենի լրագրող՝ Արման Գալոյեանի ստորագրութիւնը, եւ որուն
շահեկանութեան համար (զայն արեւմտահայերէնի վերածելով) կը ներկա-
յացնեմ ստորեւ՝

«Հասարակական-քաղաքական շրջանակներուն մէջ նոր խօսոյթ մը սկսած
է ձեւաւորուիլ, այս անգամ՝ Հայաստանի՝ Եւրոպական Միութեան անդամութեան
թեկնածու դառնալու մասին: Հիմա այս թեման բոլոր կերպով կը քննարկուի
հայաստանեան փորձագիտական ու քաղաքական շրջանակներուն մէջ:

Փորձագէտներու կողմէ քարոզչութիւն ծաւալելու առումով յարմար թեմա է:
Նախ՝ նոր է ու մօտիկ մարդոց սրտին: Մանաւանդ ռուսական կողմի ու ՀԱՊԿ-ի՝
Հայաստանի հանդէպ ստանձնած պարտաւորութիւնները չկատարելու պարտ-
նակին մէջ դէպի ԵՄ ձգտումներու մասին խօսակցութիւնները կրնան «գրաւել»
մարդոց սիրտերը:

Սակայն որքան այս թեման գրաւիչ կը թուի խօսքով, նոյնքան ալ անիրատե-
սական՝ գործնական առումով: Իսկ անիրատեսական է թէկուզ այն պատճա-
ռով, որ ԵՄ ոչ միայն քաղաքական ընտրութեան հարց է, այլեւ՝ առաջին հեր-
թին տնտեսական միաւոր: Ըստ այդմ, քանի դեռ Հայաստան կը շարունակէ
անդամակցիլ Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ), ԵՄ թեկնածու-
թեան կարգավիճակի մասին խօսիլ անիմաստ է:

Իսկ ԵԱՏՄ-էն դուրս գալ Հայաստանը չի պատրաստուիլ, յամենայն դէպս՝
խօսակցութիւններ չկան այդ մասին: Ընդհակառակը, Հայաստան պաշտօնա-
պէս բազմիցս յայտարարած է, որ կը շարունակէ խորացնել յարաբերութիւննե-
րը ԵԱՏՄ-ի հետ՝ իր հերթին սատարելով ընդհանուր ուժանիւթի շուկայի ձեւա-
ւորման գաղափարը, եւ պարբերաբար պնդելով անոր իրականացման անհրա-
ժեշտութիւնը: Հայաստան կը շարունակէ հետամուտ ըլլալ ԵԱՏՄ միասնական
թուային տարածքի զարգացման համակարգային միջավայրի հարցով, ԵԱՏՄ
համարկուած տեղեկատուական համակարգէն թուային հարթակի փոխգոր-
ծակցութեան հարցով եւ այսպէս շարունակ: Ու միեւնոյն ժամանակ հայաս-
տանեան ամենաբարձրաստիճան պաշտօնեաներու կողմէն պարբերաբար
կը հնչեն յայտարարութիւններ, թէ ՀՀ չի պատրաստուիլ դուրս ելլել ԵԱՏՄ-էն:
Ու ընդհանրապէս, Հայաստան պետութեան առաջին դէմքի մակարդակով յայ-
տարարած է, թէ արտաքին քաղաքական ուղղութեան փոփոխութիւն չի պատ-
րաստուիլ իրականացնել:



Ալ չենք խօսիր այն մասին, որ առանց անոր ալ այսօրուան լարում աշ-
խարհաքաղաքական իրողութիւններու պարագային ԵՄ անդամութեան թեկ-
նածու դառնալու՝ Հայաստանի հնարաւոր յայտն ինչ հետեւանքներ կրնայ
ունենալ: Բաւական է պահ մը արձանագրել Ռուսիոյ Դաշնութենէն Հայաս-
տանի տնտեսութեան կախուածութեան մակարդակը, եւ պատկերացնել, թէ ինչ
հետեւանքներ կրնան ունենալ կտրուկ շարժերը:

Նաեւ ԵՄ անդամութեան թեկնածու դառնալը չի նշանակեր ըլլալ ԵՄ անդամ.
թեկնածութեան յայտ ներկայացնելուն կը յաջորդէ տեւական գործընթացը,
բանակցութիւններու ու պարտաւորութիւններու կատարման լուրջ շղթայ մը, որ
երաշխաւորուած չէ, որ կ'աւարտի յաջողութեամբ: Եւ յետոյ, եթէ կը յիշէք՝ Հա-
յաստան Եւրոպական Միութեան միանալու փորձ ըրաւ մինչեւ 2013-ի սեպտեմ-
բերը, բայց յետոյ մէկ գիշերուան մէջ դարձաւ Մաքսային միութեան անդամ:
Աւելի ուշ ստորագրուեցաւ ԵՄ-ի հետ Համապարփակ եւ ընդլայնուած գործըն-
կերութեան համաձայնագիրը (CEPA), առանց տնտեսական մասի, տնտեսա-
կան բաղադրիչի: Այն ժամանակ կը քննարկուէր «Խոր եւ համապարփակ ա-
զատ առեւտրային տարածքի (DCFTA)» միանալու համաձայնագիրը, որ վեր-
ջին պահուն Մերձ Սարգսեանի իշխանութիւնը հրաժարեցաւ ստորագրելէ: Հե-
տաքրքիր է՝ առանց ԵՄ-ի չափանիշներուն մօտենալու, ԵԱՏՄ անդամի կար-
գավիճակով արդէ՞օք հնարաւոր է ԵՄ անդամութեան թեկնածու ըլլալ, ինչպէս
օրինակ Վրաստանն է 2023 թուականէն ի վեր, քանի մը տասնամեակ ալ՝
Թուրքիան:

Այս ամէնուն չէինք անդրադառնար, եթէ վտանգ չտեսնէինք, որ հասարակա-
կան-քաղաքական ու փորձագիտական շրջանակները նոր լիցք ստացած են՝
ձեւաւորելու հանրային անիրական լայն տրամադրութիւններ: Այնպէս, ինչպէս
ժամանակին կը պնդէին, որ Ռուսիան է Հայաստանի երաշխատորը, իսկ յետոյ
արագօրէն փոխեցին խօսոյթը եւ Ֆրանսային կը վերագրէին ԼՂ անկախութեան
ճանաչման քաղաքականութիւնը, այնուհետեւ Հայաստանն ալ կը հռչակուի
ՆԱԹՕ-ի նոր կեդրոնակայան: Իսկ ամէնէն վտանգատրը այս կրնայ
ըլլալ, որ մարդոց մօտ կեղծ սպասելիքներ ձեւաւորուին, որուն յաջորդէ հիաս-
թափութեան եւ անտարբերութեան ալիքը»:

Երեւան



ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



ՎԵՆԵՏԻԿԻ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 60-րդ ԲԻԵՆԱԼԵԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՒ ՏԱՂԱՒԱՐՈՎ

Վենետիկի արուեստի միջազգային 60-րդ բիենալիի Հայաստանի պաշտոնական տաղաւարը, որը գտնուում է «Մագազինօ տել սալէ» հարթակում, ընդունել այցելուներին:

Տաղաւարի բացման արարողութեանը մասնակցելու նպատակով Վենետիկում են գտնուում



ՀՀ ԿԳՄՄ նախարարի տեղակալ Դանիել Դանիելեանը եւ Ժամանակակից արուեստի վարչութեան պետ Սուեդա Սահակեանը, ով նաեւ Հայաստանի պաշտոնական տաղաւարի համակարգողն է: Հայաստանի տաղաւար է այցելել նաեւ Վենետիկի արուեստի միջազգային 60-րդ բիենալիի ժյուրին՝ ներկայացուած նախագծին ծանօթանալու նպատակով:



Հայաստանի տաղաւարի բացմանը հնչել են Մեսրոպ Մաշտոցի շարականները՝ երգչուհի Յասմին Բաղդասարեան-Դոլուխանեանի կատարմամբ: Հայաստանի ազգային տաղաւարի առանցքում հայ միջնադարեան մշակութային ժառանգութեան եւ համամարդկային տարաշերտ հոգեւոր սկզբունքների խաչմերուկում հատուող գաղափարներն են, որոնք վերաիմաստաւորում են արդիականութեան համաքննարկում: Նինա Խենչեանի «Արծազանգը» բաղկացած է երկու ծաւալում՝ միմեանց լրացնող եւ միաժամանակ իրարից սերող *ինստալեացիաներից*: Հայաստանի ազգային տաղաւարի կենտրոնական *ինստալեացիան* բաղկացած է օղում՝ կարծես անկշռութեան մէջ կախուած տասնմէկ երկնագոյն *կերամիկական* գնդերից: Այս քանդակներից իւրաքանչիւրի վրայ ոսկէ տառերով պատկերագրուած են Մեսրոպ Մաշտոցի ապաշխարութեան շարականներից տասնմէկը: Բազմամարդ տաղաւարում նախագծի հայեցակարգը հանգամանօրէն ներկայացրել են նախագծի համադրող Արմէն Եսայանը եւ արուեստագէտ Նինա Խենչեանը: Հայաստանի տաղաւարի գործունէութեան ընթացքում անցկացուելու են նաեւ կրթական ծրագրեր ու տարաբնոյթ հանդիպումներ:

Հայաստանի պաշտոնական տաղաւարը ներկայացնում է ֆրանսահայ արւեստագէտ Նինա Խենչեանը՝ «Արծազանգ» *մուլթիմետիա* նախագծով, որի համադրողը Գաֆէսեան արուեստի կենտրոնի ցուցադրութեան բաժնի տնօրէն Արմէն Եսայանն է:

Տաղաւարը լայն հանրութեան համար բաց կը լինի ապրիլի 20-ից նոյեմբերի 24-ը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼ Է «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹԵԱՆ ԳՕՏՈՒ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԳԻՐՔԸ

Հայաստանի պատմութեան քանդարանում տեղի ունեցաւ «Հայ մշակոյթը հանրահռչակող օտարալեզու գրականութիւն» ծրագրով հրատարակուած «Լեռնային Ղարաքաղի հակամարտութեան զօտու պատմամշակութային ժառանգութիւնը» անգլերէն գիրք-ալբոմի շնորհահանդէսը: Հրատարակութիւնը ներառում է Լեռնային Ղարաքաղի



դուրս, չէզոքացնել պատմաիրաւական խեղաթիւրումներն ու ապատեղեկատւութիւնը: «Լեռնային Ղարաքաղի հակամարտութեան զօտու պատմամշակութային ժառանգութիւնը» գիրքն ամբողջութեամբ հիմնուած է գիտական հենքի վրայ: Այստեղ ներկայացուած են ոչ միայն պատմամշակութային յուշարձանները, այլեւ կարեւոր ստուգաբանութիւններ տեղանունների վերաբերեալ: Ծրագրի շրջանակում հրատարակուած գրականութեամբ համալրում են աշխարհի առաջադէմ գրադարանների, մշակութային, հայագիտական կեդրոնների հայկական ֆոնդերը:

«ՋՈՒԱՐԹՆՈՑ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ - ԱՐԳԵԼՈՑ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ» ԲԱՅՈՒԵԼ Է ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ 160-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հաւաքածուն ներկայացնում է Թորամանեանի՝ Անիում եւ Հայաստանի տարբեր շրջաններում ծաւալած գործունէութիւնը՝ կատարած չափագրութիւնները ճարտարապետական յուշարձանների լուսանկարները, գիտական աշխատութիւնները, նամակները, 1927 ճամբորդական ռօթերը, ինչպէս նաեւ Թորամանեանի ջանքերով Գիւմրու հիւսիսարեւմտեան ծայրամասում գտնուող Կազաչի պոստ կոչուող աւագահանքի տեղամասից աւագահանքերի շահագործման աշխատանքների ընթացքում յայտնաբերուած շուրջ 750.000 տարուայ վաղեմութիւն ունեցող փղի մնացորդներից...



Յուցանմուշները Թորոս Թորամանեանի եւ Արամ Վրոյրի անձնական արխիւից են որոնք պահուում են «Պատմամշակութային արգելոց քանդարանների եւ պատմական միջավայրի պահպանութիւն» - ծառայութիւն Պոսկ-ի ֆոնտերում, որոշները ցուցադրում են առաջին անգամ: Իսկ փղի մնացորդները ժամանակաւոր ցուցադրութեան համար բերուել են Երկրաբանական քանդարանից:

Թորամանեանի 160-ամեակին զուգահեռ՝ նշում են նաեւ Նիկողայոս Մառի 160՝ Անիի հնագիտական արշաւախմբի ղեկավարի, ինչպէս նաեւ հնագէտ պատմաբան Աշխարհաբէկ Քալանթարի 140- ամեակները:

ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ 20-րդ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՅԹՈՒՄ ՅԱՂԹԵԼ Է ՏՈՄՈՏԱԿԱ ՄԵԿԻՆ

Միջազգային մրցոյթն աւարտուեց եւ յայտնի դարձան յաղթողները:

Այս տարի մրցոյթն անցկացուել է «Ջութակ» մասնագիտական կարգում:

Ամփոփիչ կալա համերգի ընթացքում յայտարարուեցին Խաչատրեանի անուան 20-րդ միջազգային մրցոյթի դափնեկիրների անունները եւ տեղի ունեցաւ պարգեատրման հանդիսաւոր արարողութիւնը: Այս տարի առաջին մրցանակը նուաճել է Ճափոնիան ներկայացնող ջութակահար Տոնոտակա Մեկին: Երկրորդ մրցանակակիր է դարձել Սերգեյ Սկրտչեանը (Ռուսաստան), իսկ երրորդ մրցանակը ստացել է Ճափոնիան ներկայացնող Ռիոյ Արաին:

Առաջին մրցանակակիրը պարգեատրուեց 10.000 ԱՄՆ տոլար եւ նաեւ հնարաւորութիւն է ստանում 2025-26 թթ.համերգաշրջանի ընթացքում 1 համերգով հանդէս գալու մրցոյթի կողմից առաջարկուող նուագախմբի հետ: Նա կը պարգեատրուի նաեւ ջութակով՝ Ֆլորիան Լեոնյարդի «Fine Violin» ջութակի հաւաքածուից: Գործիքը մրցանակակիրն կը տրամադրուի մէկ տարով: Առաջին տեղի մրցանակակիրն շնորհուել է նաեւ յատուկ մրցանակ Խաչատրեանի անուան 20-րդ միջազգային մրցոյթի ժյուրիի անդամ Էսթեր Հաֆների կողմից՝ «Haffnerbows» ընկերութեան արտադրութեան աղել:

Երկրորդ մրցանակակիրը պարգեատրուեց 5.000 ԱՄՆ դոլար եւ նա հնարաւորութիւն ստացաւ երկու տարի ժամկետով ելոյթ ունենալու Laureate Concert Group-ի կողմից տրամադրուող Strad ex-Huberman (1713) ջութակի կրկնօրինակով:

Երրորդ տեղը զբաղեցրած ջութակահարը պարգեատրուեց 3.000 ԱՄՆ տոլար եւ նաեւ մէկ ելոյթի հնարաւորութիւն՝ Պեռլինի Պլեքմոր համերգաւարահում 2024-2025 համերգաշրջանի ընթացքում:

Յանձնուեցին նաեւ յատուկ մրցանակներ:

Պարգեատրման արարողութիւնից յետոյ առաջին մրցանակակիր Տոնոտակա Մեկին մրցոյթի պաշտօնական նուագախումբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի հետ՝ դիրիժոր Սերգեյ Սմբատեանի ղեկավարութեամբ, կատարեց Արամ Խաչատրեանի Ջութակի կոնցերտը: Ելոյթից յետոյ նա նշեց, որ իր համար մեծ անակնկալ էր մրցոյթում ստանալ առաջին մրցանակը, իսկ Խաչատրեանի Ջութակի կոնցերտն ուղղակի հրաշալի է: Նա շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբին, որի օգնութեամբ կարողացել է լաւագոյնս ներկայանալ ստուգատեսի ընթացքում:

Մրցոյթը կազմակերպում է «Արամ Խաչատրեան» մշակութային հիմնադրամը: Խաչատրեանի անուան միջազգային մրցոյթը 2013 թուականից Ժընեւում հիմնուած Միջազգային երաժշտական մրցոյթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով:

ՄԱՐԻՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ
Երեւան

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՀԻՄՆԱԴԻՐԸ

(Երուանդ Քոչարի ծննդեան 125-ամեակի առթիւ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



Հայ կերպարուեստում շատ են երեւելի անունները: Քիչ են սակայն նրանք, ովքեր հաւասարապէս աչքի են ընկել թէ՛ գեղանկարչութեան եւ թէ՛ քանդակագործութեան ասպարէզներում: Նրանցից ամենաշանաւորը թերեւս Երուանդ Քոչարն է, որի ծննդեան 125-ամեակը լրացաւ օրերս՝ Յունիս 15-ին:

Ծնունդ է 1899թ. Թիֆլիսում՝ շուշեցի Քոչարեանների ընտանիքում: 7 տարեկան էր, երբ սկսեց յաճախել ծննդավայրի ամենայայտնի կրթական հաստատութիւնը՝ Ներսիսեան դպրոց, որի հիմնադրման 200-ամեակն ի դէպ, դարձեալ այս տարի է լրանում: Պատանի Երուանդի առաջին աշխատանքները հենց սկզբից աչքի ընկան ինքնատիպ գեղարուեստական մտածողութեամբ եւ զարմանալի հասունութեամբ:

19 տարեկանում ուսուցիչների խորհրդով Քոչարը մեկնում է Մոսկւոյ՝ գեղարուեստական կրթութիւնը շարունակելու ռուս նկարիչ Կոնչալովսկոյ արուեստանոցում: Այդտեղ էր, որ առաջին անգամ տեսաւ Փարիզից բերուած Փապլո Փիքասոյի, Ժորժ Պրաքի, Ֆերնան Լեժէի, ուրիշների ստեղծագործութիւնները եւ այլեւս երազեց յայտնուել արուեստների այդ «մայրաքաղաքում»...

Դէպի Փարիզ տանող ճանապարհին ժամանակաւոր հանգրուաններ եղան Կ. Պոլիսն ու Վենետիկը: Առաջինում նա բացեց իր անդրանիկ անհատական ցուցահանդէսը, իսկ երկրորդում կերտեց Սուրբ Ղազարի Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար Սեբաստացոյ, կարդինալ Լաֆոնթենի եւ այդ օրերին Վենետիկում գտնուող Աւետիք Իսահակեանի ուշագրաւ կիսանդրիները:

1923-ի ամռանն արդէն իր տենչած Փարիզում էր, որտեղ Արշակ Չոպանեանի աջակցութեամբ ամիսներ անց բացեց իր անհատական ցուցահանդէսը: Աւետիք Իսահակեանը Վենետիկից ողջունեց իր կրտսեր բարեկամի յաջողութիւնը՝ նրան կոչելով «ազգային հպարտութիւն»:

Յաջորդ տարուանից Քոչարը սկսում է մասնակցել անկախ նկարիչների գեղարուեստական ցուցահանդէսներին՝ ներկայանալով Փիքասոյի, Լեժէի, Գամտինսքոյ նման նկարիչների կողքին: Հայ արուեստագետի անունն արդէն պարբերաբար յայտնւում էր տեղական մամուլի էջերում, գրաւում յայտնի արուեստաբանների ուշադրութիւնը:

Փարիզում Երուանդ Քոչարն ապրեց 13 տարի՝ կազմակերպելով 5 անհատական ցուցահանդէս: Նրա սկզբնաւորած տարածական նկարչութիւնը նոր արտայայտչամիջոց դարձաւ համաշխարհային կերպարուեստում: «Տարածութիւնը 20-րդ դարի ձեռքբերումն է», - համոզուած էր նորարար նկարիչը: Արդիւնքում նա «ազատագրեց» նկարչութիւնը հարթ մակերեսից՝ նրա համար «նուաճելով» նոր տարածութիւն: Այդ մասին ինքը՝ հեղինակը գրում էր. «Մինչ այսօր նկարչութիւնը առարկան ներկայացնում էր միայն մի կողմից. դա կարծես ճակատագիր էր: Մինչդէռ ես կարող եմ առարկան, մարդուն, պեյզաժը ներկայացնել տարբեր կողմերից միաժամանակ՝ առանց քանդակելու»: Այդ պլաստիկ նկարներն արդէն կարելի էր դիտել բոլոր կողմերից՝ անշարժ ստեղծագործութեանը հաղորդելով իրատեսակ շարժում, ինչպէս նաեւ գոյների շարունակականութիւն: 1935-ին էլ Երուանդ Քոչարը հրապարակում է նկարչութեան այդ նոր տեսակի Ուղերձը, որում շարադրուած էին դրա հիմնական սկզբունքներն ու դրոյթները:

Ուշագրաւն ու զարմանալին այն է, որ փառքի եւ յաջողութեան զազաթնակէտին հասած նկարիչը յանկարծ կտրուկ որոշում է ընդունում վերադառնալ Խորհրդային Հայաստան: Ինչ իմանաք, որ իր առջեւ պիտի ընդմիշտ փակուէին ետդարձի բոլոր ճանապարհները: Աւելին՝ իր հայրենիքում նա պիտի մեղադրուէր ֆորմալիզմի՝ ձեւապաշտութեան եւ հակայեղափոխական գործունէութեան մէջ:

Քոչարին փրկում է միայն ստեղծագործելու անյաճ կիրքը, որից ծնունդ են նորանոր գործեր: 1939-ին նշուելու էր «Սասնայ ծռեր» էպոսի հազարամեակը, եւ բարեբախտաբար Մայնսթրոն պատուէր է ստանում ակադեմիկոս Յովսէփ Օրպելոյց՝ նկարազարդելու հայկական էպոսի ակադեմիական հրատարակութիւնը: Դա շատ է ոգեւորում յուսահատութեան գիրկն ընկած արուեստագէտին: Երկար մտածելուց յետոյ նա շատ հետաքրքիր մեկնաբանութիւն է տալիս իր նկարներին, որոնք ըստ հեղինակի՝ պիտի քարը յիշեցնէին: Արծաթաւուն եւ գորշ կապտաւուն տօներով լուծուած գրաֆիկական թերթերն, իրօք, քանդակների են նման՝ ծակոտկեն մակերեսային:

Հենց այդ նկարազարդումներից է ծնունդ Դաթի արձանը կերտելու գաղափարը: «Իսկ ինչու՞ չանել քանդակ», - խորհում է արուեստագէտը եւ, ով զարմանք, ընդամենը 18 օրում ստեղծում Սասունցի Դաթի գիպս տարբերակը: Գիշը է, այն տեղադրւում է Երեւանի կայարանամերձ հրապարակում, սակայն հեծեալի սուրը՝ իբր թէ դէպի «քարեկան» Թուրքիայ ուղղուած լինելու պատճառաբանութեամբ ոչնչացւում է, հեղինակն էլ ազատագրւում՝ 2 տարի 4 ամսով: Միայն Ներսիսեան դպրոցի իր ընկերների՝ Անաստաս Միկոյեանի եւ Կարօ Հալապեանի ջանքերով է դուրս գալիս բանտից:

Հալածանքներն, աւաղ, չեն դադարում: Ողբերգութիւնն այն էր, որ հետապնդողների մէջ էին Քոչարի արուեստագէտ ընկերները: Միգուցէ դա էր պարմաւք, որ Մայնսթրոն այդուհետ դադարում է իր հասակակիցների հետ շփուելուց եւ յարաբերում է միայն երիտասարդների հետ՝ դառնալով նրանց կուռքը: Ժամանակակիցները պատմում են՝ երբ նա անցնում էր Երեւանի փողոցներով, տարբերում էր բոլորից իր երկար մազերով, առանձնապատուկ հագուկապով, ձեռնափայտով, սիգարով եւ, ինչպէս արւեստաբան Ռուբեն Չարեանն է գրում իր յուշերում, «փարիզեան մի շուք կար վրան»:

Այդ շուքը շոշափելիօրէն արտայայտուեց Երուանդ Քոչարի միւս ստեղծագործութիւններում եւս: 1959թ. դեկտեմբերի 3-ին Քոչարի հեղինակած Սասունցի Դաթի նոր արձանի բացումից յետոյ տեղի ունեցաւ մինչ այդ չտեսնուած մի բան. ճերմակ սաւանը վար իջեցնելուց յետոյ բոլորը մի պահ կարկամեցին, ապա հնչեցին որոտ-ընդոտ ծափեր: Չէ՞ որ պղնձակնով կոթողի մէջ ժողովուրդն ինքն իրեն էր տեսել: Ժամանակի ընթացքում այդ արձանը, որի տեղադրման 65-ամեակը կը լրանայ այս տարեվերջին, դարձաւ Երեւանի խորհրդանիշը:

Գեղեցիկի իւրատեսակ խորհրդանիշներ դարձան նաեւ հետագայում ստեղծուած աշխատանքները՝ «Վարդան Մամիկոնեան», «Զուարթնոցի արծիւր», «Կոմիտաս», «Մելամադոնութիւն» եւ այլն: Անհնար է շրջանցել, ինչ խօսք, նաեւ «Պատերազմի արհաւիրքը» մեծադիր կտաւը, որտեղ խառնաշփոթ գունաձեւերով եւ տարատեսակ մանրամասների միջոցով պատկերուած է պատերազմի իրական դէպք իր զարհուրելի հետեւանքներով: Վաղուց է նկատուած, որ իր ներգործուն ուժով ու ազդեցութեամբ այն չի զիջում ո՛չ Պիկասոյի «Գերմիկայ»ին, ո՛չ էլ Սալուադոր Դալիի «Պատերազմի դէմքը» նկարին: Ափսոս որ ժամանակին թոյլ չտրուեց այն ցուցադրելու Փարիզում կայանալիք ցուցահանդէսին:

Յիշենք, որ Երուանդ Քոչարի անհատական ցուցահանդէսը եւս Երեւանում կազմակերպուեց շատ ուշ՝ հայրենիք վերադառնալուց 30 տարի յետոյ միայն՝ 1965-ին: Գիշը է, Մայնսթրոն կեանքի վերջում արժանացաւ ՀՀ եւ ԽՍՀՄ ժողովրդական նկարչի կոչումներին, սակայն դրանց նա վերաբերուեց սառն անտարբերութեամբ: Ափսոսում էր, որ իր արուեստը չհասկացուեց ու զգնահատուեց ժամանակին: Մխիթարուեց, որ նրա թողած ժառանգութիւնը ո՛չ ժամանակ, ո՛չ էլ տարածութիւն է ճանաչում. այն յաւելի է Հայ ժողովրդի նման:

ԼԵՐՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ



ՀԱՅԵՐԷՆԸ՝ DEEPL-Ի ԼԵԶՈՒԱՅԱՆԿՈՒՄ ԿՐԱՅ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԱՐԹԻՐ ԸԵՆԵՄՍ

Այսու կ'ուզեմ յայտնել, որ անցնող տարեվերջին պաշտօնական մամուլով մը դիմեցի մեքենական բազմալեզու թարգմանության գերմանական ծառայության՝ DeepL-ին՝ առաջարկելով ներառել հայերենը իր լեզուներու շարքին, որոնց կարգին՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, սպաներեն, ընդհուպ՝ արաբերեն, չինարեն, յունարեն ու քրեերեն: Միաժամանակ հետաքրքրություն յայտնեցի աշխատելու ընկերության հետ որպես թարգմանիչ, լեզուաբան-խորհրդատու կամ ծրագրի ղեկավար՝ նպատակ հետապնդելով նպաստելու հայերենի զոյգ լեզուաճիւղերու՝ **արեւելահայերենի** ու **արեւմտահայերենի** ոչ միայն պահպանման ու գոյատևման, այլև խթանման, տարածման ու զարգացման:

Միջանկեալ նշեմ, որ DeepL-ը, հիմնուած 2017-ին գերմանաբնակ լեհ **Եսթուալա Քուքիլովսկի**ի DeepL SE կոչուող ընկերության կողմէ, ճանաչուած է որպես մեքենական թարգմանության լուսազոյն ծառայութիւն՝ մշակութաբանութեան նկատմամբ յարգանք խորհրդանշող բազմալեզուութեան, թարգմանական բացառիկ արագութեան, մանաւորապէս ուրիշ ծառայութիւններու հետ բաղդատմամբ գերազանցող ճշգրտութեան, լեզուական հարազատութեան ու, վերջապէս, կատարելագործման տեսական ձգտումին ու հսկամտութեան համար:

Նամակէն ետք ջանացի հնարաւորինս կապը պահպանել DeepL Support Team-ին հետ, վերահաստատել առաջարկս՝ հակիրճ ներկայացնելով հայերենի՝ որպէս հնդեւրոպական լեզուաընտանիքի առանձին ճիւղի ինքնուրոյնութիւնն ու անոր ներառման ընձեռնիք առարկայական եւ ոչ-առարկայական նպատք:

Պարզ է, որ DeepL-ի նման խոշոր ծառայութիւն մը անմիջապէս պիտի չընդառաջէր անծանօթի մը առաջարկին, որովհետեւ նոր լեզուի նկատառումն ու ընդունումը (դեռ չեմ խօսիր DeepL-ի լեզուախումբին մէջ զայն ընդգրկելու մասին) ինքնին երկարատեւ գործընթաց է, որ նախ եւ առաջ կ'ենթարթ ճշգրտել տուեալ լեզուի շուկայական պահանջարկը: Սոյն «շուկան» հիմնականօրէն կը կը բաղկանայ լեզուակիր հաւաքականութիւններէ, կրթական հաստատութիւններէ, հիմնադրամներէ, ձեռնարկութիւններէ ու տարատեսակ կառոյցներէ: Շուկայական պահանջարկի ստուգումէն ետք կ'իրականացուի խնդրոյ առարկայ լեզուի մանրակրկիտ ուսումնասիրութիւն՝ հասկնալու համար անոր կառուցուածքը, իմա՝ քերականութիւնը, շարահիւսութիւնը, բառամբերը, նրբերանգները, որմէ ետք կը հաւաքուին անոյ առկայ բնագիր մեծաթիւ տուեալներ՝ յատուկ անոր յարմարցում մեքենական ուսուցման կադրապարներ պատրաստելու եւ մարզելու համար: Կ'օգտագործուին մեթոտներ՝ DeepL-ի համակարգին տրվեցնելու ճշգրիտ թարգմանութիւններ յառաջացնել այս լեզուով, այնուհետեւ արդիւնքները կը բնութագրուին ու կը բարելաւուին մասնագէտներու, այլ խօսքով՝ թարգմանիչներու, լեզուաբաններու, խմբագիրներու եւ սրբագրիչներու կողմէ:

Այս երկար-բարակ գործընթացին սկզբնաճիւղը կ'այլ ու կը մնայ շուկայական պահանջարկը: Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանէն ու Սփիւքէն հետաքրքրութիւն ցուցաբերուի նման օգտակար ծրագրի նկատմամբ:

Յաւելեալ յստակացման համար.

ա. Անհատներ՝ անկախ իրենց մասնագիտութենէն ու զբաղեցուցած պաշտօնէն, պարտին բէկուզել կարճ մամակներ ուղարկել DeepL-ին՝ պարզապէս հաստատելու համար, որ իրենց առօրեայ կեանքին մէջ կարիքը կը զգան հայերենի մեքենական արագ ու ճշգրիտ թարգմանութեան ծառայութեան (DeepL Support Team-ի ե-հասցէն՝ support@deepl.com):

բ. Կրթական հաստատութիւններ, հիմնադրամներ եւ ձեռնարկութիւններ, իրենց կարգին, պէտք է պատրաստականութիւն յայտնեն բաժանորդագրուելու DeepL Pro-ին (եթէ ամենօրեայ դրութեամբ կամ յաճախակիօրէն հայերէն փաստաթուղթեր կը թարգմանեն մէկ ուրիշ լեզուի կամ ուրիշ լեզուէ՝ հայերէնի)՝ օգտուելու համար թարգմանչական յաւելեալ ծառայութիւններէ եւ բաժանորդական հնարաւորութիւններէ (նոյն ե-հասցէն՝ support@deepl.com):

գ. Թարգմանիչներ, լեզուաբաններ, խմբագիրներ ու սրբագրիչներ պարտին իրենց մասնագիտական ամփոփագիրը ուղարկել՝ անոր կցելով մէկ-երկու էջանի բացատրողական մը, թէ ինչպէ՛ս կը պատկերացնեն իրենց դերը տուեալ ծրագրի մէջ (հետաքրքրուողները կրնան ինձի դիմել ուղեցոյցի համար՝ arthurshenian@gmail.com):

Այս նախաձեռնութիւնը ի՞նչ կրնայ տալ մեզի,– աստիճանաբար անոր օգուտներէն մէկ քանին.

1. **Լեզուի պահպանումն ու զարգացում.** DeepL-ի համակարգին մէջ հայերէն բնագիր մեծաքանակ նիւթերու պահեստաւորումը եւ թարգմանաբար հայերէն անսպառ գրութիւններու յառաջացումը կ'օգնէ պահպանելու եւ զարգացնելու լեզուն՝ զայն պահելով մնայուն շարժման ու ինքնանորոգման մէջ:

2. **Համաշխարհային տարածում.** Հայերէնի թուային ներկայութիւնը կրնայ գրաւել DeepL-ի բազմամիլիոնաւոր օգտատէրերուն ուշադրութիւնը՝ աստղծ հանդիսանալով հայերէնի նկատմամբ համընդհանուր անմիջական հետաքրքրութեան:

3. **Հատորակականութեան դիւրութիւն.** DeepL-ը կրնայ մեծապէս դիւրացնել հայուն եւ օտարին հաղորդակցութիւնը, ի մասնաւորի անոնց, որոնք չեն բաժնէր հասարակաց լեզու, այսպիսով նպաստելով երկկողմ ծանօթութեան, հասկացողութեան ու միջմշակութային հաւանական նախաձեռնութիւններու իրագործման:

4. **Հայ-օտար ձեռնարկութիւններու գործակցութիւն.** Հայ ձեռնարկութիւնները կրնան կապեր հաստատել օտար ձեռնարկութիւններու հետ, մինչեւ իսկ գործակցութեան համաձայնագիրներ կնքել՝ օգտագործելով DeepL-ի թարգմանչական ծառայութիւնը:

Դիշդ է, որ Google Translate-ի լեզուախումբին մէջ առկայ է հայերէնը, սակայն ընդամենը իր մէկ լեզուաճիւղով՝ արեւելահայերէն, եւ ո՛չ այնքան գոհացուցիչ արդիւնքներով:

Դժբախտաբար Google Translate-ի դուռը թակողը պարտի ստուգել ու, եթէ կ'ուզէ, վերստուգել ստացած թարգմանական արդիւնքը նախքան զայն ինչ-որ տեղ օգտագործելը: Բաց աստի, Google Translate-ի թարգմանչութիւնը որեւէ վարկ կամ վաւերականութիւն չի վայելել նոյնիսկ իր օգտատէրերուն կողմէ:

Google Translate-ը կարելի է նմանցնել այն սափրիչին, որ հակառակ անճարակի իր համբաւին՝ տակաւին կը շարունակէ յաճախորդ ընդունիլ՝ ամէն առիթի քիչ մը եւս տարածելով իր՝ որպէս ոչնչականի համբաւը:

DeepL-ը, ի հարկէ, Google Translate չէ:

Ըստ Forbes-ի «This German Unicorn is Trying to Take on Google Translate and ChatGPT» վերնագրեալ յօդուածին՝ հրապարակուած 8 Օգոստոս 2023-ին՝ սոյն գերմանական ծառայութիւնը ունի, ամսական դրութեամբ, աւելի քան 10 միլիոն գործուն օգտատէր, որոնցմէ 500.000-ը՝ հաւատարիմ բաժանորդ:

Չեմ կարծեր, թէ ռեւէ մէկը պիտի մտածէր բաժանորդագրուելու մասին, եթէ, իրօք, DeepL-ը ըլլար Google Translate-ի մէկ երկուորեակը:

Որպէս ամփոփում նշեմ, որ տասնամեակներէ ի վեր հողովուող **լեզուի պահպանումն ու լեզուի զարգացում** վերացարկումները կրնան այս ծրագրին շնորհիւ միս ու ոսկոր ստանալ, այլ խօսքով՝ գործնականացուի մեր իրականութեան մէջ, մասնաւորաբար՝ սփիւքեախայ:

Ի թիւս այս եւ միւս առաւելութիւններուն՝ DeepL-ի լեզուագանկին վրայ հայերէնի յաւելումը կրնայ աշխատանքի բացառիկ առիթ հանդիսանալ սփիւքեախայ թէ հայաստանահայ բազմաթիւ թարգմանիչներու, լեզուաբաններու, սրբագրիչներու եւ խմբագիրներու համար: Դառնալով DeepL-ի պաշտօնէայ՝ անոնք հնարաւորութիւն ձեռք կը ձգեն իրենց մասնագիտական ներուժն ու տարիներու փորձառութիւնը ի գործ դնելու ի նպաստ հայերէնի ոչ թէ երեւութական շնչառութեան, որ ինքնին անհեթեթ է, այլ, միջազգային ճանաչման հետ մէկտեղ, անոր աստիճանական բարեփոխման ու իրական զարգացման:

Պէյրութ - 21 Յունիս 2024

ՆՈՒՐ 70 ՏԱՐՈՒԱՆ ԶԱՐՄԱՆԱԻ ԼՈՌՈՒԹԵՆԷ ԵՏՔ՝ ԱՍՈՐԻՆԵՐԸ, ՔԱՂԵԱՅԻՆԵՐԸ, ՆԵՍՏՈՐԱԿԱՆ ԱՆՈՒԹԻՆԵՐԸ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ ԿՈԳԵԿՈՉԵՆ 1915-Ի «ՍԷՅՏՈ» ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՀԱՍՏ ՄՈՍԿՈՅԵՄՍ



Բազմաթիւ ոգեկոչման հանդիսութիւններով, իրենց օրրան Սուրիոյ (Գամիշլի) Թուրքիոյ (Տիարպէթի), Քիւրտիստան Իրաքի (Տիար, Էրաք), Հայաստանի (Դուին, Արգին), Գերմանիա (Վեսպաւտէն), Պելճիքա (Պիւրսաւ), Շուէտ (Սթոքհոլմ) եւ այլ ոստաններու մէջ «Սէյֆօ» ցեղասպանութիւնը, որուն զոհ զացին շուրջ կէս միլիոն ասորի քաղղեացի, նեստորական Աշուրի անմեղ քաղղեացիներ, հազարաւոր ալ բռնազաղի եւ տվամահութեան մատնելեցան՝ նոյնիսկ Լիբանանի մէջ ալ: Մի քանի օր առաջ ասորական եւ քրտական (հիւսիս Արեւելեան ինքնավար մարզի) հեռատեսիլի ալիքներուն մէջ իրագործած հարցազրոյցի ընթացքին («Սէյֆօ» ոգեկոչման միջազգային համագումարի առիթով, Գամիշլիի մէջ) հարց տուինք թէ ինչո՞ւ համար Նեստորական Աշուրի ազգագրութիւնները, որոնք 3000 տարիներէ ի վեր կ'ապրին եւ քաղաքակրթութիւններ ստեղծած են Սուրիոյ, Իրաքի, Թուրքիոյ, Իրանի, Հայաստանի տարածքներուն մէջ՝ յանկարծ սկսած են ոգեկոչել 1915 թ.-ին իրենց դէմ գործադրուած ահաւոր ոճիրները, թրջացումները, թալանն ու ցեղասպանութիւնը: Յիշեցնենք, որ «Չէլլօն»-ները հիւսիսային Իրանի ասորիներն էին, որոնք մարտնչեցան հնչակեան զինեալ խմբաւորումներուն հետ, փրկելով անթիւ կեանքեր:



Ինչպէս ասորի քաղղեացի-նեստորական Աշուրի ազգութիւններու դէմ ցեղասպանական արարքները կրկնուեցան 1974 թ.էն սկսեալ, Իրաքի Նիւուէի հովիտին հիւսիսային Սուրիոյ, Թուրքիոյ մէջ «խլամական պետութիւն» կոչուած եւ «Տաշ» յորջորջուած արիւնախումներու կողմէ, նոյն թրջա-ազգերական «ոճով» տեղի ունեցան 2020-2023 թ. ու Արցախի եւ Հայաստանի 3000 տարուան ազգաբնակչութեան դէմ 21-րդ հազարամեակի ցեղասպանական արարքներ: Ասորի քաղղեացի նեստորական աշուրիները իրենց հերոս մահատակներով մասնակցեցան արցախեան վերջին գոյամարտներուն, իսկ հիւսիս արեւելեան Սուրիոյ մէջ, անոնք «Սուրիական ժողովրդավար ուժեր» ազատագրական բանակի «Ասորական ռազմական ատեան»-ի «Սոթորօ»-ի (Ռազմական ոստիկանութիւն) մահիկներով, իրենց քիւրտ եւ հայ եղբայրներուն հետ արժանի պարտութեան մատնեցին «Տաշ»-ը եւ անոնց սատարող թրջական պետութեան ոճրագործները Էրտողանի գլխաւորութեամբ: Անոնցմէ կարելի է յիշել հրամանատարներ «հովրօ» Քիւն Գաբրիէլը, Արամ Հաննան (Սուրիական ժողովրդավարական բանակ), Ալլատ Հաննան («Սոթորօ»), Սանհայիպ Պարսուն, Էլիզապէթ Ղալիբէ, (Ասորական Միացեալ Կուսակցութիւն), Նազիրա Գուրիէ (Հիւսիս-արեւելեան Սուրիոյ ինքնավար մարզի կեդրոնական ղեկավարութեան անդամ), Հաննա Մամի (հիւսիս-արեւելեան Սուրիոյ հայկական Սուրիական խորհուրդ) եւ ուրիշներ: Այսօր արդէն շուրջ 90.000-նոց բանակ մը գոյութիւն ունի այնտեղ, միջազգային խաղաղապահ զօրքերու կողքին, որոնք հզօր պատուար են բոլոր ջարդարարներու եւ անոնց գործակալներուն դէմ:


Ժամանակն է արդէն, որ ոչ միայն «Սէյֆօ» եւ Հայոց ցեղասպանութիւն ոգեկոչել, այլեւ միացեալ ջանքերով կերտել նոր արշալոյս, Միջին Արեւելքի բազմաշարժար ժողովուրդներու պաշտպանութեան եւ արդարութեան հաստատման համար:

Պէյրութ - Գամիշլի - Տիար

ՀԱՆՃԱՐՆԵՐԸ ԿԸ ՄԵՌՆԻՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՄԱՀԱՆԱՐ

(Արամ Խաչատուրեանի ծննդեան
120 ամեակին առիթով)

(Ծարունակուած նախորդ թիւէն)



Կարէնն ուշի-ուշով մտիկ կ'ընէր հորը: Խօսակցութեան մէջ ինծի ծանօթ միակ բառը Ասատուրն էր:

- Վարպէտ, գիտեմ, որ Կարէնի հետ իմ մասիս կը խօսիք, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ կ'ընէք:

- Կարէնին ըսի, որ ես այսօր կամ, վաղը չկամ: Բայց ըլլամ կամ չըլլամ, միշտ յիշէ, որ Ասատուրը քու եղբայրդ է եւ զինք սիրէ եւ յարգէ, որպէս աւագ եղբայրդ:

Խաչատուրեանի մահէն երկու տարի անց՝ 1980 թ-ին, Սփիւքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն զիս հրաւիրած էր հայրենիք՝ մասնակցելու Հայաստանի Բ. հանրապետութեան 60-ամեակի տօնակատարութիւններուն:

Այդ առիթով բազմաթիւ ուրիշներու կարգին՝ հրաւիրուած էր նաեւ Մոսկուայի Մեծ թատրոնի մենակատար, պարիթոններու թագաւոր Պավել Լիսիցեանը, որուն հետ ծանօթացած էի դեռ 1958թ-ի նոյեմբերին, Կալկաթայի մէջ, երբ եր-գիչը ճափոնի մէջ համերգներ տալէ յետոյ, եկած էր Հնդկաստան իր դաշնա-կահարին, Նայում Վալթերի հետ, ելոյթներ ունենալու: Այդ տարիներուն Կալ-կաթա կ'ապրէի եւ կը պաշտօնավարէի Հայոց Մարդասիրական ճեմարանի մէջ (1957-1964): Լիսիցեանը տասը օր մնաց Կալկաթա, երբ ընտանիքս եւ ես բարեկամական սերտ կապ հաստատեցինք անոր հետ, որ հետագային շարու-նակուեցաւ մամակագրութեամբ, ինչպէս նաեւ պարբերական հանդիպում-ներով Մոսկուայի եւ Երեւանի մէջ, իմ Մոսկուայի վրայով Հայաստան այցելու-թիւններու ընթացքին (1963-1968-1973-1980):

Օփերայի շէնքնի առջեւ Պավելն ու ես կը գրուցէինք, երբ յանկարծ Կարէն Խաչատուրեանը յայտնուեցաւ եւ վազելով եկաւ քովս, ողջագոյրուեցաւ եւ սկսաւ լալ...:

- Պավել, Կարէնն ինչո՞ւ կու լայ:

- Կարէնը յիշեր է այն պահը, երբ հայրը, Լոնտոն գտնուած ժամանակ, քու ներկայութեամբդ, ըսեր է իրեն որ Ասատուրը քու աւագ եղբայրդ է եւ դուն պէտք է միշտ սիրես եւ յարգես զինք, որպէս քու աւագ եղբայրդ:

Կարէնն ու Պավելը ինծմէ քանի մը օր առաջ մեկնեցան Հայաստանէն: Լոն-տոն վերադարձի ճամբուս վրայ երկու օր մնացի Մոսկուա եւ ըստ մեր համա-ձայնութեան՝ հեռախօսեցի Կարէնին, որ Պավելն ու զիս հրաւիրեց ճաշի իր հօր յարկաբաժինը: Կարէնն ու Լուսմիլան դրան մուտքին ողջունեցին մեզ եւ առաջնորդեցին հիւրասենեակ:

Պավելն այդ օր իմ թարգմանս էր:

- Ասատուր ջան, - ըսաւ Կարէնը,- Լուսմիլան վկայ՝ հօրս մահէն յետոյ, ա-ռաջին անգամն է, որ կը բանամ այս յարկաբաժինը: Մինչեւ հիմա չէի կրնար մտնել հօրս բնակարանը... մէջս վախ մը կար: Հիմա, որ դուն հոս ես, այդ վա-խը անյայտացած է: Հայրս քեզ իր որդւոյն պէս կը սիրէր: Իմ կողմէս անթոյ-լատրելի սխալ պիտի ըլլար քեզ հօրս տունը չհիւրասիրել: Ան անհամբեր կը սպասէր քեզ ողջունել Մոսկուայի մէջ եւ հիւրասիրել իր տունը...:

Արամ Խաչատուրեանի Վերահաստիւնը եւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի հեռագիրը

Տարիներու ընթացքին Վազգէն Ա. Հայրապետի եւ Արամ Խաչատուրեանի միջեւ ստեղծուած էր բարեկամական սերտ կապ: Ներսէս Սրբազանի վկայու-թեամբ՝ անոնք յաճախ ամառները միասին հանգստանալու կ'երթային Չե-խովովաքիայի (այժմ՝ Չեխիս) Կառլովի Վարի (Karlov Vary) ամառանոցը:

Դեռ վարդապետ՝ Ներսէս Սրբազանը Վեհափառին կ'ընկերանար, որպէս Նորին Սրբութեան գաւազանակիրը:

Օր մը, երբ կէսօրուան ճաշը աւարտած էինք Լոնտոնի մեր բնակարանին մէջ, երբ Խաչատուրեան Վիվիէնէն խնդրեց, որ իրեն համար բժշկական գօտի մը գտնէ: Վարպետը շապիկին կոճակները քակեց եւ ցուց տուաւ փոքի լայն-քին վիրահատութենէն առաջացած մեծ սպին եւ ըսաւ.

- Ինչպէս կը տեսնէք, շատ լուրջ վիրահատութեան ենթարկուեցայ: Մարսա-փահար պառկած էի հիւանդանոցի մէջ: Ես մահէն շատ կը վախնամ: Կերելի բոլոր անոնք, որոնք կեանքը կը սիրեն, մահէն կը սարսափին: Բուժման ուրիշ տարբերակ չկար, անպայման պէտք է վիրահատուէի:

Յանկարծ սենեակ մտաւ վարչապետ Քոսիկինը եւ ըսաւ.

- Վարպէտ, մեր կառավարութիւնը պատրաստ է վիրահատուելու համար ձեզ որկել ձեր ուզած երկիրը՝ Միացեալ Նահանգներ, Անգլիա, Ֆրանսա, Գեր-մանիա կամ ուրիշ որեւէ երկիր: Որոշումը կը ձգենք ձեզի:

Մտածեցի, որ Մոսկուայի մէջ ալ լաւ բժիշկներ ունիմք: Ուստի, որոշեցի վի-րահատուիլ իմ ապրած քաղաքս, հարազատներուս քով:

Յաջորդ օր զիս կը պատրաստէին վիրահատութեան, երբ բոյժքոյրը հեռա-գիր մը բերաւ, գոր կարդացի եւ հոնգուր-հոնգուր լացի:

Հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-էն էր.

Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն կ'ուղարկեմք ձեզի հայրապետական օրհնու-թիւն եւ ապաքինման բարեմաղթանքներ: Իջման սեղանին առջեւ ծունկի եկած՝ կ'աղօթենք ձեր առողջութեան համար: Աստուծոյ օգնութեամբ ձեր վիրահա-տութիւնը կ'աւարտի յաջող: Շուտով կը լաւանք եւ ուխտի կու գաք Ս. Էջմիա-ծին: Կը սպասենք ձեզ: Դուք անմեռ էք, դուք անմահ էք:

Օրհնութեամբ՝
Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս,
Ս. Էջմիածին

Այդ հեռագիրն ինծի այնպիսի քաջութիւն տուաւ, որ ալ ախ ու վախ չմնաց մէջս: Երբ վիրահատութենէն յետոյ աչքս բացի՝

- Ո՞ր եմ եղաւ առաջին հարցումս:

- Հիւանդանոցի ձեր սենեակն էք, Վարպետ, վիրահատութիւնը շատ յաջող անցաւ, ըսաւ բուժքոյրը:

ՄԱՍՏՈՒՐ ԿԻՌՁԷԼԵԱՆ

Երկու ամիս յետոյ, երբ արդէն ապաքինած էի, Ս. Էջմիածին գացի Վեհա-փառին շնորհակալութիւն յայտնեցի եւ Նորին Սրբութեան օրհնութիւնը ստա-ցայ: Չորս ոչխար ալ տարի՝ որպէս մատաղ:

- Ասատուր, այս ժամացոյցը կը տեսնես, Վազգէն Վեհափառի նուէրն է: Առանց այս ժամացոյցի որեւէ համերգ չեմ դէկավարեր: Չէ պատահած նաեւ, որ նախքան կարեւոր համերգ մը դէկավարելս, չերթամ Էջմիածին եւ չստա-նամ Վեհափառի օրհնութիւնը...:

1977-ին անգլիացիները շատ ջերմ ընդունեցին Արամ Խաչատուրեանը: Սովետի դեսպանին կողմէ Արամ Խաչատուրեանի պատուին տրուած ընդու-նելութեան, Մեծն Բրիտանիոյ երաժիշտներու, արուեստի տարբեր բնագա-ւառներուն մէջ աշխատող բազմաթիւ հանրածանօթ անձերու կարգին ներկայ գտնուեցան նաեւ նախկին վարչապետներ Հարոլտ Ուիլսոնն ու Էտուարտ Հիթը:

Ա. Խաչատուրեանը Էտուարտ Հիթի հիւր

Մեծն Բրիտանիոյ նախկին վարչապետ Էտուարտ Հիթը Արամ Խաչատուր-եանը հրաւիրած էր իր տունը ընթրիքի: Հիթը, բացի անուանի քաղաքական գործիչ ըլլալէ, ծանօթ էր նաեւ որպէս երաժիշտ-խմբավար: Խաչատուրեանը կը պնդէր, որ անպայման ընկերակցիմ իրեն: Փորձեցի բացատրել Վարպե-տին, որ Հայաստան չենք գտնուիր, որ առանց հրաւերի՝ հիւրն իր հետ ուրիշ-ներ ալ տանի ընդունելութեան...:

- Ինչպէ՞ս, ըսաւ Վարպետը, ես իրաւունք չունի՞մ իմ ընկերս հետս տանելու:

- Անգլիոյ՝ առիաստարակ եւրոպական երկիրներու մէջ այնպիսի քալը մը ծայ-րայեղ անքաղաքավարութիւն կը նկատուի: Վարպետ, երբ ձեզ հիւրասենեա-կէն ճաշասենեակ առաջնորդեն, պիտի տեսնէք որ ճաշասեղանին վրայ, իւրա-քանչիւր աթոռի դիմաց քարթի մը վրայ գրուած կ'ըլլայ հիւրին անունը, որուն համար վերապահուած է այդ աթոռը: Եթէ զիս ձեզի հետ տանիք, հինգշաբթի օրուան պէս մէջտեղ կը մնամ:

Մօտ քառորդ ժամ տեւող վիճաբանութենէն յետոյ, Վարպետը թէեւ դժգոհ՝ բայց տեղի տուաւ:

- Վարպէտ, հրաւիրատոմսին վրայ նշուած է, որ հիւրասիրութիւնը կը սկսի ժամը 8-ին եւ կ'աւարտի՝ 11-ին: Ես ձեզ կը հասցնեմ Հիթի տունը ճիշդ ժամ 8-ին, իսկ 11-ին՝ կը վերադառնամ եւ ձեզ կը տանիմ պանդոկ:

Պանդոկ վերադարձի ճամբուն վրայ Վարպետը խոստովանեցաւ, որ իրեն չընկերակցիլս ճիշդ որոշում էր:

- Ասատուր, լաւ որ չեկար, այլապէս հինգշաբթի օրուան պէս մէջտեղ պիտի մնայիր: Սեղանը դասաւորուած էր ճիշդ քու ըսածիդ պէս:

Լերի Ատլեր եւ Արամ Խաչատուրեան

Արամ Խաչատուրեանի երկրպագուներէն մէկը աշխարհառշակ շրթհարմո-նիսթ (mouth organist) Լերի Ատլերն էր, որ ինծմէ խնդրեց իրեն համար ժամադ-րութիւն մը առնել Խաչատուրեանէն:

- Ո՞վ է Լարի Ատլերը, հարցուց Վարպետը: Կարծեցի որ կատակ կ'ընէր::

- Լերի Ատլերը աշխարհի շրթհարմոնիայի մեծագոյն վարպետն է:

Պարզուեցաւ, որ Խաչատուրեանն իսկապէս չէր լսած Լերի Ատլերի մասին, բայց համաձայնեցաւ հանդիպիլ անոր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Վարպետի յարկաբաժինին մէջ, ուր երեք հոգի ներկայ էր. երկու հանճարեղ երաժիշտներ՝ մէկը կոմպոզիտոր, միւսը՝ կատա-րող, իսկ երրորդը՝ թարգմանի դեր կը կատարէր...:

Խաչատուրեանին բացատրեցի, որ Լերի Ատլերը կը խնդրէր, որ իր գործի-քին համար երաժշտութիւն մը յօրինէր, որուն համար պատրաստ էր 5,000 վճարել, 2,500-ը այժմ՝ որպէս կանխավճար, իսկ մնացեալը՝ երբ ստեղծագոր-ծութիւնը պատրաստ ըլլար:

- Իսկ ինչո՞ւ կ'ուզէ որ անպայման ես յօրինեմ այդ երաժշտութիւնը իր գոր-ծիքին համար, հարցուց Վարպետը:

- Վարպետ, ըսաւ Ատլերը, կրնամ անվարան հաստատել, որ դուք մեղեդի յօրինելու տաղանդով օժտուած 20-րդ դարու մեծագոյն կոմպոզիտորն էք: Իսկ իմ գործիքս միայն մեղեդիով կը սնանի:

- Իսկ ո՞ր է այդ գործիքը, հարցուց Վարպետը նայելով շուրջը:

Երբ Լերին շրթհարմոնիան գրպանէն հանեց եւ Խաչատուրեանին ցոյց տուաւ, Վարպետը ապշած նախ նայեցաւ գործիքին, յետոյ Լարիին, ապա՝ ինծի եւ հարցուց.

- Այդ պզիկ գործիքով կ'ուզէ իմ յօրինելիք երաժշտութիւնը նուագել:

Երբ Լերին դրական պատասխանեց, Վարպետը խնդրեց, որ բան մը նուագէ: Հիմա յստակ չեմ յիշեր, թէ ի՞նչ նուագեց, բայց գիտեմ, որ բաւական բարդ կտոր մըն էր: Վարպետն իմ ուղղութեամբ այնպիսի հայեացք մը արձակեց, որ միայն մեզ կը խաբէ նշանակել:

- Ասատուր, ժաքեթին գրպանն անպայման ձայնաժապաւէն նուագելիք գործիք մը կայ: Այդ փոքրիկ գործիքով անկարելի է մնան երաժշտութիւն նուա-գել: Ըսէ իրեն թող ժաքեթը հանէ եւ ուրիշ բան մը նուագէ...:

Լարին ժաքեթը հանեց եւ աւելի բարդ կտոր մը նուագեց:

- Անկարելի է, Ասատուր, ես երաժշտական գործիքներու կարելիութիւնները լաւ գիտեմ. այդ գործիքով, մնան երաժշտութիւն կարելի չէ նուագել, եզրակաց-րեց Վարպետը:

Լերին, գուշակելով մեր խօսակցութիւնը, հարցուց.

- Շապիկս ալ հանե՞մ:

- Թող հանէ, ըսաւ Վարպետը:



Պարոյր Սեւակ

100 ՏԱՐԵԿԱՆ

Պատռելով արգելքները, Պարոյր Սեւակ առաջինը եղաւ, որ Ապրիլեան Եղեռնը գեղարուեստական գրականութեան բերաւ եւ քերթողութեան վերածեց։ Ան լուսարձակները ուղղեց արգիլեալ նիւթին, աշխարհի երեսին պոռթկաց մեր ճնշուած ցուն ու արգիլուած պատմութիւնը։ Զանգակատունը, իր գեղարուեստական արժանիքներուն կողքին, ու թերեւս անկէ ալ աւելի, հրդեհի պէս տարածուեցաւ շնորհիւ իր նիւթին ահարկու տարողութեան, անոր մշակման յորդահոս ու ջիւնջ, վարակիչ ու անզսպելի ուժգնութեան վրայ։

Կոմիտասի կեանքը եւ անոր միջոցաւ արեւմտահայոց նահատակութեան տռամը ընդգրկող Զանգակատունը Սեւակի մեծ ուստումն էր։ Թումանեանի, Նարեկացիի, Սիամանթոյի, Վարուժանի, Չարենցի շունչը հոն էին, ինչպէս նաեւ մեր պատարագն ու շարականները։

Զանգակատունէն ետք Պարոյր Սեւակ կրնար նստիլ իր փառքին վրայ եւ կրկնել ինքզինք հայրենաշունչ տողերով։ Սակայն ստեղծագործ հանճարը միշտ նոր բարձունքներու կը ձգտի։

Եւ Սեւակի յաջորդ գիրքը՝ «Մարդը Ափի Մէջ» նոր էջ մը բացաւ հայ գրականութեան մէջ։ Սեւակ անցաւ հայրենասիրականէն համամարդկայինին։

Կան սիրային գեղեցիկ երգեր՝
Դո՛ւ՝
կամ
Դո՛ւ՝
երկու տա՛ն,
հասարա՛կ մի դերանուն (ՄԱՄ 1958)
կամ
Նա՞ է գրում ինձ,
Թէ՞ ես եմ գրում իմ հարազատին,-
Ինքս էլ չգիտեմ.
«Արդեօք քեզ ե՞րբ եմ, ե՞րբ եմ տեսնելու...
Զմե՛ռ ու ամա՛ռ,
Աշո՛ւն ու գարո՛ւն...
Իսկ ո՞ր է տարուայ մե՛ր եղանակը,
Այն հինգերորդը...» (ՄԱՄ) 1963
Իմաստասիրական գործերը լայն տեղ ունին հոս, ինչպէս՝ ՎԱՐՔ ՄԵԾԱՑ.ը, որուն ակնարկեցինք վերը, նաեւ ՈՍԿԻՆ ՎԵՐՍՍԻՆ ՈՍԿԻ Է ՄԵՌՈՒՄ բանաստեղծութիւնը՝
Ուզում եմ ասել.
-Գթասի՛րտ եղէք,
Եղէք ողորմա՛ծ,
Մարդու նկատմամբ մա՛րդ եղէք, մարդի՛կ։ 1958թ
Բանաստեղծը կը յայտարարէ թէ ինք ընտանի, ապահով միջինին հետետողը չէ՝
Եւ ինձ լսելով՝
Կարող եմ ասել.
«Գժուե՞լ է, ի՛նչ է».
Իսկ ես էլ կ'ասեմ.
«Այո՛, գժուե՛լ եմ,
Ինչո՞ւ չգժուել»։ 1961 ԳԺԻՌՈՒՄ ԵՄ

Խարազանելով փոքրոգի մարդոց նենգութիւնը, Պարոյր Սեւակ իր հաւատքը անխախտ կը պահէ մարդու բարութեան եւ ստեղծագործ մտքի հանճարին.

Ինչո՞ւ՞ թաքցնեմ,
Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն։
Ի՛նչ ասես չկայ նրա փակ սրտում։
Գիտի կործանել,
Բայց եւ... զո՛րծ անել,
Նա գիտի կեղծել՝ Ու սրբապղծել, Առաւել եւր՝
Գիտի ստեղծել՝։
Ես հաւատում եմ նրա բնութեան ո՛չ թերութեանը
ՀԱՒՏԱՌՈՒՄ ԵՄ 1957

Եւ իրատես է իր պայքարին մէջ՝
Չե՛մ ուզում կռուել յիմարների հետ,
Չե՛մ ուզում կռուել.-
Էլ ջիղ չմնա՛ց. 1957 ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՄ
Նաեւ՝
Յոռեստութեան համար չեմ ծնուել
Եւ դէմ եմ յիմար լաւատեսութեան, 1961թ
ԽՕՍՔ ՀԱՒԱՍՏԻՔԻ
Եւ
Խոստանում եմ
Բաց ճակատով զուր չխփուել հաստ պատերին։
Ինչի՞ համար.
Էլի՞ պատը կը մնայ պատ,
Կը պակասի մի լաւ ճակատ։ 1957
ԽՈՍԱՆՈՒՄ ԵՄ (ՄԱՄ)

Եւ ինքնագնումի եւ ինքնաքննադատութեան մէջ է միշտ՝

Քիչ է պատահում, որ ինքըս ինձնից
Փոքր ինչ գոհ լինեմ։
Դժգոհ եմ յաճախ, 1959թ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՍԻՐԵԼ

Սեւակի անպարագիծ պաշտամունքը հայերեմի նկատմամբ յաճախ կը դրսևորուի իր գործերուն մէջ։

Ախ, իմ հայրենի՛ք...
Իմ ամբողջ կեանքում լեզուդ եմ սերտում
Եւ չեմ սովորել անսխալ խօսել,
(երգ եռաձայն 1960)

Ուրիշ տեղ մը.
Ես էլ բառերի լուացարար եմ.
Մաքրում եմ նրանց փոշին դարաւոր
Ազատում նրանց կեղտ ու բորբոսից,
Բառակեր ժանգից ու բառաքոսից, 1959թ
ԱՆՇՆՈՐՀԱԿԱԼ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի դէպ, Պարոյր Սեւակ ամէնէն լայն հայերէն բառապաշար գործածած բանաստեղծն է եւ ամէնէն բեղմնատու բառաստեղծը։

Պարոյր Սեւակի եօթներորդ քերթողագիրքը՝ «Եղիցի Լոյս»ը տպուեցաւ 1969-ին, բայց լոյս չտեսաւ հեղինակի կենդանութեան։

«Եղիցի Լոյս»ով իր կատարելութեան հասաւ Սեւակի քերթողական արուեստը։ Անոր հանճարին տիրական շունչը կը սահի, էջ-էջ կը թռի մտորումի, կասկածի, ինքնագնումի, կսկիծի փայլակներով լուսատրուած։ Մարդկային աննիւթական եւ անժամանցելի արժէքներու որոնումը զինք կը տանին լոյսին, անկեղծութեան, ճշմարիտին, արդարութեան։

Կը յայտարարէ՝
Աշխարհին, այո՛, մաքրութի՛ւն է պէտք 1965թ
Եւ կ'աղերսէ Աստուծոյ՝
Թողութիւն տուր, Տէ՛ր, ծանրը խաւարին,
Միայն թէ թող Նա թողնի հեռանայ։
ՄԻԱԶՔԱՆԻՆ բանաստեղծութիւնը քանի մը տողի մէջ կը խտացնէ մեծ ճշմարտութիւն մը.
Մի աչքով եմ նայում կեանքին։ (Երկրորդ աչքըս ապակուց է)։ Եւ մի հատիկ իմ այս աչքով շատ եմ տեսնում,
Իսկ երկրորդով՝ աւելի՛ շատ,
Որովհետեւ
Առողջ աչքով ես տեսնում եմ,
Իսկ կոյր աչքով... մի՛շտ երագում... 1963թ.

Ներքին տագնապներէն յոգնած քերթողը Աստածածնին կը դիմէ՝ Դժգոհութիւնից ես շա՛տ եմ դժգոհ։
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Եւ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխօս եղիր ի՛մ եւ ի՛մ միջև,
Որ բանն աւարտուի ինքնահաշտութեամբ։ 1963թ

Կը զգուշացնէ միամտութենէ՝
վստահելը՝ լաւ է շատ,
Բայց չափից շատ վստահելը՝ մի աղէտ, 1963թ
Մտածումները ներս ուղղելով, Սեւակ դիտել կուտայ թէ մարդ նախ ի՛նքն իր մէջ պէտք է պատասխաններ փնտռէ եւ վստահի իր ներքին ձայնին՝ Դու էլ յիշիր,
Որ երբ իզուր հարց չեն տալիս՝
Մոտ պատասխան չե՛ն ստանում։
Ինչպէս նաեւ ըլլալ խոհեմ եւ կիրքին տիրապետելով անկումը կանխել՝
Եւ առաւել լաւ չէ՞ արդեօք,
Որ մարդու ո՛տքը սայթաքի
Քան թէ լեզու՛ն։ 1963թ դու մի հարցրու
Մարդու մօտ մարդկայնութիւն կը բաղձայ՝
- Բ ա՛ր եւ, -
Քե՛զ Ու Ձե՛զ,
Ծանօ՞թ-անծանօ՞թ իմ սիրելիներ։
:.

Թո՛ղ անկարելին դառնայ կարելի
Աշխարհում համայն,
Ամէնքի՛ս համար,
Դառնայ կարելի վաղն ու հենց հիմա,
Դառնայ կարելի մէկ բառով՝
- Բ ա՛ր եւ... 1964թ.
Մահող ու արագ հեռացող ժամանակին ակնարկելով՝ Ծերանում ենք, Պարոյր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս,

Գ. ՄԻՍՈՆԵԱՆ
Ծերանում ենք, սակայն կարծես
Դարձեա՛լ խելքի չենք գալիս.- 1963թ
Սակայն ափսոս, ինք ծերանալու պիտի չի հասնէր։
ԵՌԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ-ը պոեմին մէջ, դարձեալ դիմելով իր հայրենակիցներուն պիտի գրէր. օտարութեան մէջ ազատ լինելն էլ ա՛յլ գերութիւն է, իսկ տան մէջ նոյնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ազատութիւն։
Եւ պիտի ցաւով մատնանշէր.
Թողած ցաւը մեր, ցաւը լեռ ու բեռ՝
կրում ենք ցաւը համա՛յն աշխարհի։
Թողած հոգսը մեր, հոգսը քար ու սար՝
հոգում ենք հոգսը համա՛յն աշխարհի... 1965թ

Ինչպէս նշեցի արդէն՝ «Եղիցի Լոյս»ը տպուեցաւ 1969-ին, բայց լոյս չտեսաւ հեղինակի կենդանութեան։ Պարոյր Սեւակի համբաւը շատերու նախանձը գրգռած էր։ Անոնք չէին կրնար հանդուրժել Սեւակի նկատմամբ ժողովրդային լայնատարած սէրը եւ բանաստեղծին տիրական դիրքը ժամանակակից գրական կեանքին մէջ։ Եւ փոքրոգի գրչակից եղբայրներ, բանաստեղծութիւններէ անջատւած տողեր թարգմանած եւ Մոսկուա ուղարկած էին «հակասովետական» ամբաստանութեամբ։ Ամմիջապէս արգելք դրուած էր եւ գիրքը տպարան մնացած։ Մոսկովեան գրաքննիչները ուսումնասիրելէ ետք ամբաստանագիրը, «հակասովետական» բան չգտնելով հոն, գիրքը արտօժան էին։ Սակայն անյայտ պատճառներով, գրքին կալանքը ի գորու կը մնար Հայաստանի մէջ։ Երկու տարի ճակատը պատին չխփել խոստացած բանաստեղծը զլուխը պատէ պատ զարկած էր, բայց անօգուտ։ Զգուած, 1971 յունիսին, Հայաստանի գրողներու համագումարին, կը հրաժարի վարչութեան քարտուղարի պաշտօնէն, որ կը վարէր 1966-էն ի վեր։ Կը վերադառնայ Չանախչի։ Երկու շաբաթ ետք՝ 17 յունիս 1971-ին ինքնաշարժի արկածով կը մահանայ։ Լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի եւ կը ցնցէ ողջ հայ ժողովուրդը։ Ամմիջապէս առեղծուածային դառի մը մասին շշուկներ կը սկսին տարածիլ, որոնք մինչեւ օրս ալ կը շարունակեն շրջան ընել։

Յովիկ Չարխչեան, իր «Սեւակի մահուան առեղծուածը» հետազօտական գիրքին մէջ կը հետապնդէ բոլոր տուեալները, հետքերը, ժամանակակիցներու կարծիքները, ոստիկանական տեղեկագիրները. եւ եզրակացութիւնը պարզ է, թէ արկածին պատճառը Պարոյր Սեւակի անփորձ վարորդ ըլլան էր։ Բանաստեղծին թռռնիկը, գրականագէտ Սեւակ Ղազարեան կը բացատրէ.
«Սեւակն այդ ժամանակ դեռ նոր-նոր էր մեքենայ վարել սովորում...» եւ կ'աւելցնէ. «Մինչեւ օրս չի յայտնաբերել Պարոյր Սևակի մահուան վերաբերեալ գէթ մէկ ծանրակշիռ փաստ, որ խօսի յօգուտ «ղաւաղորթեան» կամ «սպանութեան» վարկածի։»
Դէպքին ականատես վկայութիւնը Սեւակի տասներեք ամեայ որդի Արմէնէն է, որ կը պատմէ թէ Պարոյր Սեւակ, կինը եւ երկու տղաքը Չանախչիէն Երեւան պիտի գային։ Ճամբուն վրայ կը հանդիպին բեռնատար կառքի մը որ դանդաղ կ'ընթանար։ Սեւակ կը փորձէ անցնիլ, բայց բեռնատարի վարորդը, զայրոյթի,՞ թէ՞ չարամիտ կատակի համար ճամբայ չի տար, մեքենան աջ ու ձախ թեքելով քանի մը անգամ, մինչեւ անփորձ վարորդը՝ Սեւակը հակակշիռը կը կորսնցնէ եւ ինքնաշարժը շուռ կու գայ։ Տեղւոյն վրայ Սեւակ կը մահանայ, իսկ կինը հիւանդանոցը գործողութեան սեղանին վրայ։
Համատարած սուգը կը կլանէ ողջ հայ ազգը։ Համազգային յուղարկատրութեամբ մարմինը կը թաղուի Չանախչիի իր հօրենական տան պարտէզը։ Հոգեհանգիստին, Վազգէն վեհափառ կը խօսի սրտառուչ ճառ մը. «Պարոյր Սեւակի ծնունդը՝ մեր կեանքի, մեր մշակոյթի, մեր ներկայի ու ապագայի համար եղաւ ճշմարտապէս մի պայծառ «եղիցի լոյս»։ Նա իր ողջ կեանքով ու ստեղծագործութեամբ դարձաւ շողացող մի լոյս մեր կեանքում։ Ահա այսպէս ճշմարտուեց, թէ «լոյս եղեւ» մեր կեանքում մի անգամ եւս»։ Վազգէն Ա. բանաստեղծին պատահազիչն էր եւ հոգեկան կապ մը կար երկու մեծ հայորդիներուն միջեւ։ Ամենայն Հայոց հայրապետին նուիրած իր մէկ գիրքը Սեւակ պիտի մակագրէր՝«Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

Պոլիս

ԿԵՂՈՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Կեղրոնականի ընտանիքը 14 Յունիսին խանդավառ հանդեսով մը հրաժեշտ տուաւ վարժարանի այս տարւոյն հունձքին, որ կը բաղկանայ 61 ընթացաւարտէ: Ըստ վերջին տարիներուն ձեւաւորուած նախընթացին, Գումգաբուի մէջ տեղի ունեցաւ Կեղրոնականի շրջանաւարտութեան հանդէսը, որու յայտագիրը ամբողջութեամբ կը ցոյացնէր պատմական այս կրթօճախին հարուստ աւանդութիւնները: Շրջանաւարտներն ու Կեղրոնական ընտանիքի պատասխանատուները նախ նկարա-



հանուեցան Պատրիարքարանի առջեւ: Աւելի վերջ բոլորը անցան Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր եկեղեցոյ համալիրը, ուր յայտագրի զանազան փուլերը կեանքի կոչուեցաւ: Առաջին հերթին Մայր տաճարին մէջ յարգանքի այցելութիւն մը տրուեցաւ Կեղրոնականի մեծամուն հիմնադիր Ներսէս Պատրիարք Վարժապետեանի շիրմին: Ապա յարակից Որդոց Որոտման տաճարին մէջ վկայականներու յանձնման արարողութիւնը տեղի ունեցաւ՝ մինչ տղաքը ջերմ ծափահարութիւններու արժանացան: Օրուան պատուոյ հիւրն էր Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Սահակ Ս. Արք. Մաշալեան, որ յանձնեց դպրոցի առաջինին վկայականը եւ հանդէս եկաւ օրհնութեան խօսքով մը: Ներկայ էին նաեւ Տ. Յովակիմ Վրդ. Սերովբեան, Պատրիարքական փոխանորդ Տ. Գրիգոր Ա. Քինյ. Տամատեան եւ Տ. Շիրվան Քինյ. Միրզեան:

Վկայականներու յանձնումէն վերջ, յայտագիրը շարունակուեցաւ «Պէզնեան» սրահի երդիքին տակ՝ այս անգամ ընդունութեան մը ձեւաչափին մէջ: Ընդունելութիւնը պատրաստուած էր դպրոցի ծնողաց միութեան կողմէ: Յայտագիրը գործադրուեցաւ՝ հանդիսավարութեամբ Նարեկ Նարեկ Կիւլէշի եւ Անտրէ Կեօրէի: Ներկաներու շարքին էին Ղալաթիոյ խնամակալութեան ատենապետ Սկրտիչ Արծիւեան եւ գործակից ընկերները, Կեղրոնականի հիմնադրի ներկայացուցիչ Յարութիւն Էպիօղոս, տնօրէնուհի Սիլվա Գույումճեան, կրթական մշակներ, Կեղրոնականի ընտանիքէն այլ կառոյցներու պատասխանատուներ, ծնողներ եւ հիւրեր, որոնք բոլորն ալ ջերմօրէն շրջապատեցին շրջանաւարտները: Այս մթնոլորտին մէջ տնօրէնուհի Սիլվա Գույումճեան հանդէս եկաւ ելոյթով մը, որու ընթացքին բարձր գնահատանքով արտայայտուեցաւ այն ծնողներուն մասին, որոնք զգայնութիւնը կ'ունենան իրենց զաւակները հայկական վարժարան մը ուղարկելու: Արդարեւ, Սիլվա Գույումճեան մատնանշեց, որ մեր վարժարանները ոչինչով կը զիջին՝ իրենց զանազան գովազդուած կամ հրապարակուած նմաններուն բաղդատմամբ: Տնօրէնուհին, որ տասնամեակներ է վեր ձեռնհասօրէն Կեղրոնականի դրօշակիրը դարձած է, այս տարւոյն շրջանաւարտներուն ալ յորդորեց՝ ապագային իրենց կապը չխզել թէ՛ իրենց դպրոցին եւ թէ ընդհանրապէս հայկական կեանքին հետ:

Կեղրոնականի շրջանաւարտներու հրաժեշտի պատկանելի համայնապատկերին վրայ առանձնապէս ուշագրաւ դարձան այն դրուագները, երբ կարգ մը շրջանաւարտներ իրենց վկայականները ստացան ձեռամբ իրենց ծնողներուն, որոնք նոյնպէս Կեղրոնականէն վկայուած էին:

Այս բոլորէն վերջ շրջանաւարտներուն համար պատրաստուած կարկանդակն ալ հատուեցաւ եւ Կեղրոնականի ընտանիքը այս տարի եւս ճանապարհի դրաւ իր հերթական հունձքը՝ միշտ վստահ ըլլալով, թէ դպրոցի առաքելութեան յարատեւութիւնը անպայման կ'ապահովուի եւ ան միշտ կենսունակ կը մնայ հայութեան համար մարդու պատրաստելու ճանապարհին:

Այս առթիւ ջերմօրէն կը շնորհաւորենք Կեղրոնականի ընտանիքը՝ մարտնչելով նորանոր նուաճումներ:


ՏԵՐԵԱԹՎՓԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՃՈՐՃ ԲԵՕԾԿԵՐԵԱՆ

Խոր վիշտով տեղեկացանք Ռամկավար Ազատական Կուսակցութեան անդամ, Լիբանանի Ա. Եկարեան մարտական Ակումբի հիմնադիր ընկերներէն, զանաւարտակ Ընկեր Ճորճ Քէօշկերեանի մահուան տխուր լուրը, որ պատահեցաւ Մայիս 30, 2004-ին Սարնիայի մէջ, Գամատա: Ան ծնած էր Մայիս 9, 1934-ին: Ընկեր Ճորճին արի կեցումը Լիբանանի քաղաքացիական պատերազմին վստահաբար արձանագրուած պիտի մնայ մեր կուսակցութեան պատմութեան էջերուն մէջ:

Ան մաս կը կազմէր ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «Անդրանիկ» Պարախումբին որպէս մեծապարող: Գամատա հաստատուելէ ետք ան իր մասնակցութիւնը շարունակեց բերել զանաւարտայ մեր շրջանակին ազգային, մշակութային ու քաղաքական գործունէութեան:

Այս տխուր առթիւ մեր խորագգած ցաւակցութիւնները կը յայտնենք այրիին՝ ընկերուհի Հրանդուհին, զաւակներուն՝ Անիին եւ Վաչէին, ինչպէս նաեւ՝ զաղափարի ընկերներուն:



ՓՐՈՖ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Տերեւթափը կը շարունակուի խելով արժեքատու ընկերներ ...: Յունիս 20, 2024-ին իր մահկանացուն կնքեց Լիբանանի երախտատու ընկերներէն՝ Փրոֆ. Գրիգոր Գրիգորեան Պէյրութի մէջ: Ան որպէս կրթական մշակ Լիբանանի Հ.Բ.Ը. Միութեան վարժարաններէն ներս ունի տարիներու վաստակ մը: Ան յաճախ ներկայացուցած է մեր վարժարաններուն հարցերը Լիբանանի կրթական նախարարութեան մօտ: Հասցուցած է սերունդներ, որոնք իր իսկ քաջալերանքով ստրված ու սիրած են արաբերէն լեզուն ու մշակոյթը:

Լայն եւ անշահախնդիր մասնակցութիւն բերած է ՌԱԿ-ի զանազան կառոյցներէն ներս: Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն իր ապրած շրջանէն՝ Արեւելեան Պէյրութէն օգտակար եղած է տեղւոյն հայ համայնքի ընտանիքներուն:

Յուդարկատրութեան եւ թաղման արարողութիւնը կատարուեցաւ Յունիս 20-ին Ս. Նշան մայր եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Շրպալեքի Ազգային գերեզմանատունը: Այս տխուր առթիւ կը ցաւակցինք Գրիգորեան եւ Եսայեան ընտանիքներուն:



Պարոյր ՍԵԱԿ

(Ծարունակուած 10րդ Էջէն)

Նեղութիւնը սրտի իմոյ բազում եղեն յոյժ, եւ ի վշտաց իմոց հա՛ն զիս: Տես զխոնարհութիւն իմ եւ զվաստակ իմ, եւ թո՛ղ ինձ զամենայն մեղս իմ: Սրախ նեղութիւնները շատցան. Իմ վիշտերէս զիս դուրս հանէ: Իմ նեղութեան ու տառապանքիս նայէ ու բոլոր մեղքերս ներէ: Օրհնութեան ակնկալումով՝ Պ. Սեւակ»:

Պարոյր Սեւակի հաւատքը հայոց հայրենիքին, լեզուին ու կրօնքին հանդէպ անխախտ էր:

Մահուրէն անմիջապէս ետք ամօթալի արգելքը վերցուեցաւ եւ «Եղիցի լոյսի» 25,000 օրինակները սպառեցան քանի մը օրէն: Իր եղերական մահէն ետք, Սեւակի անձն ու գործը աննախադէպ սիրոյ եւ պաշտամունքի պիտի մնայ քաղաքացիներուն, բան մը որ մեր հազարամեայ պատմութեան ընթացքին քիչերու վիճակուած է: «Նրա երկերը սպառուած էին ակնթարթօրէն, նրա դիմանկարները ամենուր էին՝ տներում, խանութներում, մեքենաների դիմապակիներին... նկատենք նաեւ, որ շատ դէպքերում դա անում էին այնպիսի մարդիկ, ովքեր Սեւակի որեւէ ստեղծագործութիւն չէին կարդացել: Բայց պահում էին, ինչպէս կը պահեն թանկագին մասունք կամ... սրբապատկեր»:

Իր ԵՐԳ ԵՆԱՉԱՅՆ քերթումով մէջ Սեւակ կը բաղձար՝ Ա՛խ, իմ հայրենիք... Դու՛ ես -

Հազարամեայ իմ ազգանո՛ւնը,
այնպէ՛ս ապրել կարողանայի,
որ ինձ ազգանուն բաշխելուդ համար
Դու երբեքից անյարմար չզգաս...

Ապրելու կենս էլ պատուով մեռնելն է: Ա՛խ, երանի՛ թէ ես այնպէ՛ս մեռնեմ, որ դու... ինձ սգաս: 1960թ (ՄԱՄ)

Եւ հայրենիքը ոչ միայն անյարմար չզգաց, ալ զինք դասեց իր մեծագոյն զաւակներուն շարքին: Եւ երբ մեռաւ անժամանակ, ամբողջ ազգը՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի ողբաց ու սգաց իր կորուստը:

Պարոյր Սեւակ մարդը, մտքի բանաստեղծը, գրականագէտը, որու հոգին ճախրեց ազատ, ոչ մէկ սահման ընդունեց, ոչ մէկ կաշկանդում տարաւ, ոչ մէկ կաղապարի ենթարկուեցաւ: Եղաւ անկեղծ ինքն իրեն, երգեց ցաւն ու պարծանքը իր ազգին ու հայրենիքին, աղաղակեց մարդու հոգիի ցածութեան դէմ, բայց եւ գովերգեց մարդկային ոգիի վսեմութիւնը:

Հիմա նոր սերունդին համար դժուար է պատկերացնել այն հեղինակութիւնը, դիրքը եւ յարգանքը որ բանաստեղծներն ու գրողները կը վայելէին հայ կեանքի մէջ, տակաւին մինչեւ երեսուն տարի առաջ: Պարոյր Սեւակ յառաջապահն էր այդ փաղանգին: Հիմա քանի հոգի գիտէ 1940-ականներէն մինչեւ 1980-ականներու Հայաստանի կամ Սփիւռքի քաղաքական դեկավարներուն անունները: Սակայն ամէն քիչ թէ շատ գիտակից հայ առնուազն լսած է Սեւակի, Շիրազի, Կապուտիկեանի, Խանգաւտեանի եւ այլոց անունները: Ժամանակները փոխուած են եւ քաղաքական արժեքներ իրենց դիրքը զիջած են ընչաքաղցութեան եւ նիւթապաշտութեան: Մեր օրերուն, գրականութիւնը կորսնցուցած է իր տիրական դիրքը: Քիչեր կը կարդան եւ այդ քիչերուն ալ մէկ չնչին բաժինը բանաստեղծութիւն կ'ըմբռնեն: Ժամանակի փոշին շատ բան կը ծածկէ: Սակայն իրական արժեքները կը դիմանան այդ անբիշ հիւծումին:

Եւ այնքան ատեն որ կը գոյատեւէ հայ ազգն ու մշակոյթը՝ Սեւակի ձայնը, Սեւակի խօսքը պիտի սաւառնի ու խանդավառէ սերունդները:

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ



Շաբաթաթերթը

այսուհետեւ կարելի է կարդալ

www.baikarweekly.com

կայքէջով

ՊԵՅՐՈՒԹՈՒ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՄ ԵՒ ՄԻԼՎԱ ՄԻՍՈՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ 2023-2024 ՏԱՐԵՆՐԶԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

Վահան Թեքեան Միջնակարգ Վարժարանի Տնօրենության, ուսուցչական կազմին եւ ծնողներուն ներդաշնակ եւ համերաշխ գործունեութեան շնորհիւ, հեզասահ կերպով աւարտեցինք Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզի 2023-2024 տարեշրջանը:

Արդ, հովանաւորութեամբ վարժարանիս հոգաբարձութեան, Կիրակի, 16 Յունիս 2024-ին, Յակոբ Պարսամեան սրահէն ներս տեղի ունեցաւ Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզի ամսվերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը: Ներկայ էին ԹՄՄ-ի Հիմնադիրներու Մարմնի անդամներ, ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ, Հոգաբարձութեան ատենապետուհի՝ Տիկ. Անի Լաչինեան Մակարեան եւ անդամներ, ԹՄՄ-ի Տեղական Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Փափազեան եւ անդամներ, ծնողներ եւ բարեկամներ:



Հանդիսութիւնը բացուեցաւ մեր սիրասուն աշակերտներուն քաղցրահունչ երգեցողութեամբ՝ Լիբանանի, Հայաստանի Հանրապետութեան եւ վարժարանիս քայլերգներու յոսկկայս ունկնդրութեամբ:

Մանկապարտիզականուհի Տիկ.Վերա Սունկուլեան Հանճա ներկաները ողջունելէ ետք իր սրտի խօսքին մէջ ըսաւ. «Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզի մեր հոգեհատորները տարեշրջան մը ամբողջ բարձրորակ ուսման կողքին վեհ ու բարձր պահեցին իրենց հայութիւնն ու հայրենիքը՝ Հայաստանը եւ հայու հոգիով ու շունչով բոծուած «Անիին ու Արամին Երազը» խորագրով թատերախաղով պիտի փոխանցեն ողջ հայութեան երազը՝ ուխտելով շարունակել հայուն պայքարը ու հասնիլ յաղթանակի»:

Ան իր խօսքը շարունակեց շնորհակալական խօսքեր յայտնելով առաջին հերթին Մէմ եւ Միլվա Միսոնեաններուն, որոնց ջերմ շունչը կրթական տարեշրջան մը ամբողջ ուրախացուց մեր աշակերտները բարեգարդուած նոր մանկապարտեզով, ուր անոնք անցուցին ուրախ եւ հաճելի պահեր: Ան խորին շնորհակալութիւն յայտնեց նաեւ վարժարանիս հոգաբարձութեան ժրջան անդամներուն եւ ատենապետուհիին, Տնօրենուհի Տիկ.Սեւանա Սեմերճեան Տարագճեանին, որուն յատուկ հոգածութեան շնորհիւ մեր վարժարանը կը մնայ այն ամբողջ, ուր գալիք սերունդները վառ պիտի պահեն մեծ գրագէտ Վահան Թեքեանի անունը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց ուսուցչական կազմին եւ վերջապէս մեր սիրելի ծնողներուն՝ հայ կրթօճախին հանդէպ իրենց ցուցաբերած վստահութեան եւ իրենց զաւակները մեզի վստահելուն համար: Հոսկ ան բարի վայելում մաղթեց բոլորին:

Բացման խօսքին յաջորդեց Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզի միամնայ գործունեութեան մասին տեսերիզի ցուցադրութիւնը, որմէ ետք աշակերտները ներկայացան «Անիին եւ Արամին Երազը» թատերախաղով, որուն ընդմէջէն Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտները, որպէս Լիբանանի տիպար քաղաքացիներ խորխտաբար երգեցին « نحن هون سنعيش » երգը: Ծաղիկ դասարանի աշակերտները ներկայացան « Սիրտս Քոնն է Հայաստան» պարով, որ հանդիսատեսներուն սրտին հարազատ ու հաճելի թուեցաւ: Դարձեալ բեմ բարձրացան Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտները, այս անգամ հայրենասիրական ոգիով տոգորուած երգելու «Պատերազմ Եմբ Գնում» եւ «Հայեր Միացէ՛ք» երգերը: Իսկ Կոկոն, Ծիլ եւ Բողբոջ դասարանները՝ իւրաքանչիւր հերթաբար ներկայացաւ «Կարս», «Իմ Հայրենիք Վան» եւ «Հու Հա» պարերով: Վերջապէս Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարանները միասնաբար ներկայացան «Միասնութեան Շուրջպարով», ապա «Հերոսներու Կենացը» եւ «Pour Toi Armenie» խմբերգներով:

Վահան Թեքեան Վարժարանի կրթական խօսքն ու ուսումնական տարեշրջանի զեկոյցը փոխանցեց Տնօրենուհի Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեան, որ ներկայացուց մեր վարժարանի կրթադաստիարակչական գործունեութիւնները: Ան ներկաները ողջունելէ ետք նկատել տուաւ, որ այս տարի մեր Մանկապարտեզը անուանակոչուեցաւ «Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզ»: Բարեբարներուն կատարած իշխանական ներդրումին շնորհիւ մանկապարտեզը օժտուեցաւ արդիական եւ գունագեղ դասարաններով: Ան իր խօսքը շարունակեց ըսելով, թէ մեր վարժարանը յաջողութեամբ բոլորելով 73-րդ դպրոցական տարեշրջանը, անգամ մը եւս յաջողեցաւ մանուկը դաստիարակել լիարժէք հայաշունչ մտածելակերպով, ինչպէս նաեւ՝ զայն կազմաւորել ազգային նկարագրով եւ մարդկային արժէքներով:



Տնօրենուհին երախտագիտութիւն յայտնեց Մէմ եւ Միլվա Միսոնեաններուն՝ դրուատելով անոնց ցուցաբերած անսակարկ նուիրումութիւնը, ջանքերը եւ շարունակական աջակցութիւնը:

Ան նաեւ թուեց Մանկապարտեզի փոքրիկներուն այցելած զանազան կրթադաստիարակչական վայրերը, անոնց աշխոյժ մասնակցութիւնը դպրոցական

Մեր Արուեստագէտները - 379

ԺԻՐԱՅՐ ՕՐԱԳԵԱՆ

Արտայայտչական (Էքսպրեսիոնիստ) նկարիչ Ժիրայր Գրիգորի Օրագեան (ստեղծագործական կեղծանունը Չերարտո) ծնած է Յունիս 6, 1901-ին Կ. Պոլիս: 1920 թուականին կը մեկնի Հռոմ, ուր կ'ուսանի տեղւոյն գեղարուեստի ակադեմիան: Հեղինակ է բազմաթիւ գծանկարներում, իւղաներկ եւ ջրաներկ աշխատանքներու: Օրագեանի ստեղծագործութիւնները ցուցադրուած են բազմաթիւ երկիրներու մէջ:



Մօտ 100 գործ հեղինակը կտակած է Հայաստանին, կը գտնուին Հայաստանի ազգային պատկերասրահին եւ ժամանակակից արուեստի թանգարանին մէջ:

Անհատական ցուցահանդէսներ տուած է 1947 – Հռոմ, 1958 – Հռոմ, 1961 – Հռոմ, 1966 – Երեւան (յետ մահու): Մասնակցած է 1950 եւ 1955 թուականներու Վենետիկի գեղանկարչական ցուցահանդէսներուն:

Գործերէն կը նշենք. «Զարդը» (Եղեռն) - 1951, «Յիշատակներ Հայաստանէն» - 1952, «Քաղաքը» - 1952, «Նահատակներ» - 1952, «Պար» - 1960, «Զրոյց» - 1960, «Երեխաներ» - 1960, «Սրճարան» 1961 ու դեռ՝ «Գաղթականներ», «Որբեր», «Գիւղական կեանք», «Թափառաշրջիկ դերասաններ», «Իմ ընտանիքը», «Հանդիպում», «Անսահմանութեան առջեւ», «Գիւղական ընտանիք», «Վշտակիցներ»:



Կը մահանայ Օգոստոս 2, 1962-ին Հռոմ:

տօնակատարութիւններուն եւ «Կիլիկիոյ Տարի» հռչակման Կիլիկիոյ Ձեռնարկին, անոնց ծանօթացումը «Robotics»-ին: Տնօրենուհին ուրախութեամբ անդրադարձաւ, թէ Մէմ եւ Միլվա Միսոնեան Մանկապարտեզի ուսուցչուհիները մասնակցեցան վերապատրաստման կրթադաստիարակչական մեթոտներու՝ ժամանակակից ծրագիրներով: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց “Rotary Club Beirut Cedars”-ին, Տիար Յակոբ Տանձիկեանին եւ “ Clara Margossian Trust”-ին՝ իրենց կատարած 50 KW արեւային էլեկտրածին ուժանիւթային համակարգին: Ան ջերմագին շնորհակալական խօսքեր ուղղեց նաեւ այն բոլոր նուիրատուներուն, որոնց շնորհիւ մեր վարժարանը օժտուեցաւ նոր փոխադրակառքով մը՝ մասնաւորաբար Թեքեան Մշակութային Միութեան Ամերիկայի Արեւմտեան Ափի եւ Մեծագոյն Նիւ Եորքի Վարչութեանց պատասխանատուներուն՝ իրենց կատարած նիւթաբարոյական նեցուկին համար:

Վերջապէս Տնօրենուհին շնորհակալութիւն յայտնեց վարժարանս հովանաւորող ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնին, որ հայապահպանման համար ամէն ճիգ ի գործ դնելով, սատար հանդիսացած է ու մինչեւ օրս կը շարունակէ հաւատարմօրէն գորակցիլ վարժարանիս առաքելութեան ու վերելքին, վարժարանիս Հոգաբարձութեան՝ ատենապետութեամբ Տիկ. Անի Լաչինեան Մակարեանին, մեր սիրելի ծնողներուն՝ իրենց զաւակները մեր վարժարանին վստահելուն համար, կենսունակ ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան: Հոգաբարձութեան եւ Տնօրենութեան անունով շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք նպաստեցին վարժարանիս գոյերթին: Ան ուրախութեամբ յայտարարեց, որ կրթաթոշակը 5-րդ տարին ըլլալով՝ 2024-2025 տարեշրջանին դարձեալ պիտի ըլլայ անվճար: Հոսկ, ան շնորհաւորեց մեր շրջանաւարտները յաջողութիւն եւ կանաչ ճանապարհ մաղթելով անոնց:

Տնօրենուհին խօսքէն ետք ոգեւորիչ երաժշտութեան ներքոյ եւ ներկաներուն յոտնկայս ծափողջոյններուն տարափին տակ՝ հանդիսաւոր կերպով մուտք գործեցին շրջանաւարտները:Անոնք նախ ներկայացան Rhythmic « Հայ Երգ»-ով, որմէ ետք շրջանաւարտներու անունով ուղերձ կարդաց Անդրանիկ Խաչատուր (հայերէն), Իլայ Մուրատեան (արաբերէն) եւ Գլոէ Ճինկէոգեան (անգլերէն), որոնք իրենց անմեղ առողջանութեամբ փոխանցեցին իրենց մտորումները մեր վարժարանին նկատմամբ: Տեղի ունեցաւ վկայականաց բաշխման արարողութիւնը ձեռամբ Հոգաբարձութեան անդամուհի Տիկ. Նայիրի Պապունեան Պուշաքճեանի, Տնօրենուհի Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանի, Մանկապարտիզականուհի Տիկ. Վերա Սունկուլեան Հանճայի եւ Ծաղիկ դասարանի դաստիարակչուհի Օրդ. Դաւար Գեորգեանի:

Շրջանաւարտները բեմին առջեւ ընդունեցին շնորհատրութիւնները: Իւրաքանչիւր ամսվերջի հանդէս, կու գայ մեզի յուշելու տարեշրջանի մը աւարտը եւ մեր կրթական պատմութեան էջերուն արձանագրելու հպարտառիթ էջ մը:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԼՐԱՏՈՒՄԿԱՆ ԳՐԱՄՆԵՆԱԿ